



**ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ  
ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ  
ԿԱՐԳԸ**

PUBLIC OF ARMENIA

**ԶԵԿՈՒՅՑ**

Երևան, 2021



Սույն հետազոտությունն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՀՀ Գլխավոր դատախազության համակարգում միջազգային ստանդարտների ամրապնդում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների հետ:

*Զեկույցի հեղինակներն են Հասմիկ Հարությունյանը և Արաքս Մելքոնյանը*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ .....	3
Կազմակերպության կողմից իրականացվել է նաև Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթի դիտարկում:.....	4
Դատախազական ինքնակառավարման մարմինները.....	5
Գլխավոր դատախազի նշանակումը .....	6
Կարգի վերաբերյալ .....	7
Դատախազների ընտրությունը .....	12
Նշանակման ընթացակարգը.....	15
Դատախազներին ներկայացվող պահանջները .....	15
Դատախազի ընտրություն և պաշտոնի նշանակում: ՀՀ Ներպետական կարգավորումներ .....	17
Գլխավոր դատախազի ընտրությունն ու դատախազների նշանակումը.....	17
Գլխավոր դատախազին և դատախազներին ներկայացվող պահանջները.....	21
Գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը .....	23
Գլխավոր դատախազի լիազորությունների դադարումը.....	24
Դատախազների ընտրության և նշանակման կարգը.....	25
Որակավորման հանձնաժողովի դերը դատախազի թեկնածուների ընտրության հարցում .....	36
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ .....	38
Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթի դիտարկում .....	40
Ընդհանուր տեղեկություններ մրցույթի վերաբերյալ .....	41
Հանձնաժողովի կազմը .....	43
Մրցույթի թափանցիկություն և հրապարակայնություն .....	45
Հարցազրույցների անցկացում .....	46
Հանձնաժողովի կողմից որոշման կայացում.....	51
Թեկնածուների բարեվարքության ստուգման եւ ԿԿՀ եզրակացությունների դերը.....	52
ԿԿՀ կողմից բարեվարքության գնահատումը.....	55
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	58

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատախազության համակարգը քրեական արդարադատության ոլորտի կենտրոնական դերակատարներից է, որի արդյունավետ գործունեությունը լայն վերցրած դատախարավական համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքն է:

Հայաստանի Հանրապետությունում դատախազության համակարգը, վերջինիս ձևավորումն ու գործառույթների իրականացումը առավել քիչ ուսումնասիրված հարցերից է՝ ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ պրակտիկայում:

Սույն ուսումնասիրության նպատակն է վեր հանել ՀՀ դատախազության համակարգի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների բացերն ու թերությունները մասնավորապես Գլխավոր դատախազի եւ դատախազների ընտրության եւ պաշտոնի նշանակման հարցում: Այս առնչությամբ մանրամասն ուսումնասիրության առարկա է դարձել ընտրության եւ նշանակման ողջ գործընթացը՝ դրանում ներգրավված մարմինները, նշանակման ու ընտրության գործընթացի հիմքում դրվող չափանիշները, թեկնածուներին ներկայացվող պահանջները, թափանցիկության ու հրապարակայնության հարցերը: ՀՀ ներպետական օրենսդրության կարգավորումները ուսումնասիրվել են վերաբերելի միջազգային ստանդարտների ու առանձին երկրների փորձի հետ համեմատությամբ: Ջուզահեռաբար, կազմակերպության կողմից իրականացվել է դատախազության համակարգում պաշտոնի նշանակման համար հայտարարված դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթի մշտադիտարկում: Վերջինս նպաստել է առավել հստակ պատկերացում կազմել գործընթացի, կարգավորումների եւ դրանց պրակտիկ կիրառման առանձնահատկությունների առնչությամբ՝ վեր հանելով ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկայի խնդիրները: Առանձնակի ուշադրություն է դարձվել նաեւ ընտրության գործընթացում վերջերս ներդրված թեկնածուների բարեարքության ստուգման հարցին, օրենսդրական կարգավորումներին ու պրակտիկ իրացմանը, ինչպես նաեւ դրա հետեւանքներին:

Իրականացված ուսումնասիրության արդյունքում վեր հանված օրենսդրական եւ պրակտիկ խնդիրների հիման վրա մշակվել են նաեւ համապատասխան առաջարկություններ՝ ոլորտի բարեփոխումների համար:

### Մեթոդաբանություն

Վերը ներկայացված ուսումնասիրությունն իրականացվել է հետեւյալ մեթոդաբանությամբ՝

- *Փաստաթղթերի ուսումնասիրություն*

Ուսումնասիրվել են մասնավորապես «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Գլխավոր դատախազի վերաբերելի հրամաններն ու հաստատված կարգերը, ոլորտը

կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտեր: Ուսումնասիրվել են նաև Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված տարբեր փաստաթղթեր, Վենետիկի հանձնաժողովի ընդունած մոտեցումներն ու առանձին երկրների օրենսդրությունների վերաբերյալ ներկայացված կարծիքները, այլ մարմինների զեկույցներ ու հաստատված ստանդարտներ:

- *Տեղեկատվության հարցումներ*

Առանձին հարցերի հստակեցման, տեղեկությունների ստացման համար հարցումներ են ուղարկվել ՀՀ Գլխավոր դատախազություն:

- *Մշտադիտարկում*

Կազմակերպության կողմից իրականացվել է նաև Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթի դիտարկում:

- *Հանդիպում-հարցազրույցի իրականացում*

Դատախազների թեկնածուների բարելարքության ստուգման օրենսդրական եւ պրակտիկ հարցերի վերաբերյալ առավել հանգամանալից պատկերացում կազմելու համար հանդիպում է տեղի ունեցել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հետ:

## Դատախազական ինքնակառավարման մարմինները

Դատախազների ընտրության և պաշտոնի նշանակման կանոնները, ինչպես նաև դրանում ներգրավված մարմինների կազմավորման ու գործունեության կարգավորումները դատախազական համակարգը քաղաքական ազդեցություններից ու ճնշումներից պաշտպանելու կարևորագույն երաշխիքներից է:

Միջազգային չափանիշներն ու առանձին երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատախազական համակարգում պաշտոնի նշանակման գործում կարևոր դերակատարում ունի *ինքնակառավարման անկախ մարմնի առկայությունը*: Ինքնակառավարման մարմնի մեկ միասնական մոդել, սակայն, գոյություն չունի<sup>1</sup>: Որոշ երկրներում նման մարմնի դերում հանդես է գալիս դատախազների ընդհանուր ժողովը կամ դատախազական ընդհանուր կոնֆերանսը, որը լուծում է դատախազների գործունեության ամենակարևոր հարցերը: Օրինակ, նման հարցերից կարող է լինել վարքագծի կանոնների հաստատումը: Կան նաև երկրներ, որտեղ դատախազների ու դատավորների համար գործում է մեկ միասնական ինքնակառավարման մարմին: Վենետիկի հանձնաժողովը այս առնչությամբ նշել է, որ այն դեպքերում, երբ դատախազական ու դատական մեկ միասնական խորհուրդ է գործում, պետք է նաև երաշխիքներ լինեն, որ դատավորներն ու դատախազները չեն ազդի միմյանց նշանակումների վրա<sup>2</sup>:

Նմանապես, գոյություն չունի մեկ միասնական մոտեցում ինքնակառավարման մարմնի կազմի ու ձևավորման առնչությամբ: Խորհրդարանը, Նախագահը կամ Կառավարությունը կարող են մասնակցել նման մարմնի անդամների ընտրությանը:

Որպես անդամ սովորաբար հանդես են գալիս ինքնին դատախազները, դատավորները և իրավաբան հանդիսացող մասնագետները:

Ինքնակառավարման մարմնի առկայությունը պարտադիր համարվող միջազգային պահանջ չէ: Սակայն, երկրներում, *որոնք ժողովրդավարության ու իրավունքի*

---

<sup>1</sup> The Independence of Prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific, OECD, 2020, Conclusions, page 36

<sup>2</sup> Venice Commission (2010), Report on European Standards as regards the Independence of the Judicial System: Part II – The Prosecution Service (hereinafter – Venice Commission Report)

*գերակայության հաստատման նպատակ են հետապնդում, ինչպես նաև կարևորում են կոռուպցիայի դեմ պայքարը, նման ինքնակառավարման մարմնի գոյությունը կարող է խթանել այդ գործընթացները, ինչը դատախազներին արտաքին ճնշումներից պաշտպանելու, թափանցիկություն և արդյունավետություն ապահովելու հավելյալ միջոց է, որոշ դեպքերում այն արդյունավետ է նաև դատախազների կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու գործում:*

Խորհուրդ է տրվում ապահովել, որ անդամների մեծամասնությունը հանդիսանան դատախազներ՝ ընտրված դատախազական համակարգի բոլոր բաժիններից: Միննույն ժամանակ, խորհուրդ չի տրվում ստեղծել խորհուրդ, որը բացառապես կազմված կլինի դատախազներից<sup>3</sup>, ինչը կորպորատիվ շահի պաշտպանության տպավորություն կարող է ստեղծել: Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է նման մարմիններում նախատեսել նաև քաղհասարակության ներկայացուցիչների ու իրավաբան-գիտնականների ներկայությունը<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է նման մարմնի գործառույթներին, ապա դատախազական համակարգի համալրմանը զուգահեռ կարևորվում է նաև վերջինիս կողմից կարգապահական պատասխանատվության հարցի լուծումը: Այս առնչությամբ սակայն ընդհանուր մոտեցումը հանգում է նրան, որ դատախազական խորհուրդը չպետք է վարույթ հարուցող եւ վերջնական որոշում կայացնողը լինի, ըստ այդմ, խորհուրդ է տրվում նախատեսել նաև վարույթ հարուցելու իրավասություն ունեցող հանձնաժողով, որի կատարած ուսումնասիրության հիման վրա խորհուրդը որոշում կկայացնի<sup>5</sup>:

## **Գլխավոր դատախազի նշանակումը**

Գլխավոր դատախազի ընտրության հարցում միջազգային մոտեցումները հանգում են նրան, որ նշանակման հարցում պետք է ներգրավված լինեն մասնագիտական, ոչ-քաղաքական փորձագիտական խմբեր, ինչը լավագույնս ապահովվում է Դատախազական խորհրդի կողմից: Նույնիսկ եթե նման մարմնի անդամների

---

<sup>3</sup> Ibid

<sup>4</sup> ibid 1

<sup>5</sup> The Independence of Prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific, OECD, 2020

ընտրությանը մասնակցում են քաղաքական մարմիններ, սակայն ընտրությունը թափանցիկ է, հրապարակային և հիմնված օբյեկտիվ չափանիշների վրա, ապա այն ընդունելի տարբերակ կարող է լինել:

Գլխավոր դատախազների նշանակման հարցում Վենետիկյան հանձնաժողովը նույնպես որպես կարևոր հարց դիտարկում է մի կողմից այդ նշանակման ժողովրդավարական օրինականության ապահովման, մյուս կողմից ապաքաղաքական գործընթաց ապահովելու բալանսավորման հարցը<sup>6</sup>: Ըստ այդմ, այն նշանակումները, որոնք ներառում են օրենսդիր կամ գործադիր իշխանության մասնակցությունը այդ գործընթացին, տալիս են նաև օրինականության երաշխիքներ: Այնուհանդերձ, նման դեպքերում անհրաժեշտ են լրացուցիչ երաշխիքներ նշանակման գործընթացի հնարավոր քաղաքականացվածությունը նվազեցնելու համար: Այս նպատակով, որպես լավագույն լուծում առաջարկվում է Դատախազական խորհուրդների ձևավորումը, որը էական դերակատարում ունի գլխավոր դատախազի նշանակման գործում:

Թեկնածուի պաշտոնի նշանակումը պետք է հենվի օրենքով սահմանված հստակ չափանիշների վրա, որտեղ կենտրոնական դեր ունեն իրավաբանական որակավորումն ու փորձառությունը: Հատկանշական է, որ դատախազների համար պահանջվող ընդհանուր որակավորման պահանջները բավարար չեն գլխավոր դատախազի համար, վերջինիս պաշտոնի նշանակման համար պահանջվում են հատուկ կարողություններ և փորձառություն<sup>7</sup>:

## Կարգի վերաբերյալ

Գոյություն չունի մեկ ընդհանուր պարտադիր մոտեցում, թե ով՝ երկրի նախագահը կամ պառլամենտը պետք է նշանակի գլխավոր դատախազին, հատկապես այն

---

<sup>6</sup> CDL(1995)073rev, Opinion on the Regulatory concept of the Constitution of the Hungarian Republic, chapter 11

CDL-AD (2015)039, Joint Opinion of the Venice Commission, the Consultative Council of European Prosecutors and OSCE office for Democratic Institutions and Human Rights on the draft Amendments to the Law on the Prosecutor's Office of Georgia

<sup>7</sup> Նույն տեղում

CDL-AD (2015)039, Joint Opinion of the Venice Commission, the Consultative Council of European Prosecutors and OSCE office for Democratic Institutions and Human Rights on the draft Amendments to the Law on the Prosecutor's Office of Georgia



դեպքում, երբ վերջինս ենթակա չէ կառավարությանը: Սակայն միանշանակ է, որ մասնագիտական կարողությունների ու որակավորման վերաբերյալ խորհրդատվություն պետք է ստացվի իրավաբանական համայնքից՝ ներառյալ քաղհասարակության ու դատախազների մասնակցությամբ:

Այն երկրներում, որտեղ գլխավոր դատախազը ընտրվում է Խորհրդարանի կողմից, գործընթացի քաղաքականացվելու վտանգը կարող է նվազեցվել հատուկ փորձագետների կողմից տրված կարծիքի և խորհրդարանական հանձնաժողովի ներգրավվածությամբ: Իսկ խորհրդարանական որակյալ մեծամասնությամբ ընտրությունը կարող է ընկալվել որպես նման նշանակումներին կոնսետուսի հասնելու հնարավորություն:

Որպես ընդհանուր մոտեցում ընդունելի տարբերակ է գլխավոր դատախազի նշանակումը հնարավորինս երկար ժամկետով կամ մշտական հիմունքներով՝ մինչ թոշակի անցնելը: Պաշտոնավարման ժամկետը չպետք է համընկնի խորհրդարանի գործունեության ժամկետի հետ<sup>8</sup>:

Վրաստանում, օրինակ, գլխավոր դատախազը ընտրվում է 6 տարի ժամկետով Խորհրդարանում պատգամավորների ընդհանուր ձայների մեծամասնությամբ: Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ գլխավոր դատախազի ընտրության համար Խորհրդարանում ձայների որակյալ մեծամասնության պահանջը ընդունելի ընթացակարգ է<sup>9</sup>:

Կարևոր է նախատեսել այնպիսի ընթացակարգ, որը թույլ կտա գլխավոր դատախազի ընտրության հարցում ձեռք բերել հանրության վստահությունն ու դատական իշխանության ու իրավաբանի մասնագիտության նկատմամբ հարգանք ձևավորել: Հենց այդ պատճառով, խորհուրդ է տրվում ապահովել մասնագիտական, ոչ-քաղաքական փորձագիտական մասնակցություն այդ գործընթացին: Միննույն ժամանակ, հասկանալի է նաև կառավարության հնարավոր ցանկությունը որոշակի

---

<sup>8</sup> CDL-PI (2018)001, European Commission for democracy through law, Compilation of Venice Commission opinions and reports concerning prosecutors  
A Prosecutor General should be appointed permanently or for a relatively long period without the possibility of renewal at the end of that period

<sup>9</sup> CDL-AD (2017)013, Opinion on the draft revised Constitution of Georgia, para 83

հսկողություն ունենալ գլխավոր դատախազի ընտրության գործում՝ հաշվի առնելով վերջինիս դերակատարումը պետության համար: Ըստ այդմ, ընդունելի տարբերակ է նշանակման հանձնաժողովի ձևավորումը, որը բաղկացած կլինի հանրության և կառավարության կողմից վստահելի անձանցից: Այդպիսիք կարող են հանդիսանալ՝

- Դատարանների նախագահները
- Փաստաբանական պալատի նախագահը
- Հանրային ծառայության ղեկավարը
- Համալսարանների իրավաբանական ֆակուլտետների ղեկավարները
- և այլն:

Գլխավոր դատախազի պաշտոնի համար ցանկալի է նախապես հրապարակային հայտարարություն տարածել՝ նշելով նաև պահանջվող բոլոր պահանջներն ու որակավորումները: Եթե ընտրության գործընթացի դերակատարները Կառավարությունն ու Խորհրդարանն են, ապա ձևավորված հանձնաժողովը ներկայացված հայտերը ուսումնասիրելուց և լավագույն երեք թեկնածուներին առանձնացնելուց հետո պետք է ներկայացնի Կառավարությանը կամ Խորհրդարանին՝ կախված նրանից, թե ում է վերապահված նշանակման իրավասությունը: Վերջիններս ներկայացված թեկնածուներից ընտրում են այն թեկնածուին, որը լավագույնս համապատասխանում է այդ պաշտոնին: Հնարավոր է նաև այնպիսի ընթացակարգի նախատեսում, որի պարագայում վերջնական նշանակումը հաստատում է պետության նախագահը, նման դեպքում, սակայն, նախագահը հայտը մերժելու իրավասություն չունի:

Թեկնածուների հարցում այլ երկրների փորձի ուսումնասիրությունը վեր է հանում տարբեր մոտեցումներ: Ուկրաինայի օրենսդրական կարգավորումների համաձայն գլխավոր դատախազի պաշտոնում առաջադրվող թեկնածուները պետք է լինեն դատախազական համակարգի բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք, ինչը նշանակում է, որ համակարգից դուրս այլ թեկնածուներ չեն կարող առաջադրվել: Այս առնչությամբ, Վենետիկյան հանձնաժողովը նշել է, որ նշված կարգավորման անհրաժեշտության առնչությամբ լրացուցիչ հիմնավորման կարիք կա<sup>10</sup>: Նման

<sup>10</sup> CDL-AD(2013)025, Joint Opinion on the draft Law on the Public Prosecutor's Office of Ukraine

մոտեցումը ենթադրում է, որ գլխավոր դատախազի պաշտոնում միայն դատախազական համակարգի ղեկավար պաշտոններից նշանակումը պետք է հնարավորինս հիմնավորված ներկայացվի, այլ պոտենցիալ թեկնածուներին դիմելուց զրկելու և իրավունքների խախտումը կանխելու նպատակով:

Դատախազական համակարգը առավել անկախ տեսք կարող է ստանալ, եթե գլխավոր դատախազի և առանձին ոլորտային մասնագիտացման դատախազների թեկնածուների շրջանակը լայնանա՝ հնարավորություն տալով այդ պաշտոններին դիմել ոչ միայն դատախազներին, այլ նաև այլ մասնագետների, ովքեր ունեն 12 տարվա դատավորի աշխատանքի փորձ (գլխավոր դատախազի պաշտոնի համար) կամ 10 տարվա՝ այլ պաշտոնների համար: Ավելին, այն թեկնածուները, ում նախկին աշխատանքը և փորձը ցույց է տալիս հատուկ մասնագիտական գիտելիքների ու կարողությունների առկայություն, որը թույլ կտա դատախազի գործառույթները իրականացնել, ապա կհամապատասխանի նաև դատախազական պաշտոնների համար<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է ընտրության կարգին, ապա ձևավորվել են որոշակի ստանդարտներ, որոնք սահմանում են, թե հատկապես ինչից պետք է խուսափել ընտրության ընթացքում: Օրինակ, Վենետիկի հանձնաժողովը Հունգարիայի Դատախազության ծառայության ակտի վերաբերյալ կարծիքում անընդունելի է համարել պառլամենտական 1/3 +1 ձայնի միջոցով նոր դատախազի ընտրության տապալումը և գործող դատախազի անժամկետ պաշտոնավարումը: Պառլամենտական փոքրամասնության կողմից նոր դատախազի ընտրության խոչընդոտումից խուսափելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանել հստակ ժամկետներ գործող գլխավոր դատախազի պաշտոնավարման ավարտից հետո նոր գլխավոր դատախազի ընտրության համար կամ նախատեսել, որ ժամկետը լրանալուց հետո պաշտոնավարումը դադարում է՝ առանց սպասելու նոր դատախազի ընտրությանը<sup>12</sup>:

Գլխավոր դատախազի ընտրության մեկ միասնական մոդել գոյություն չունի, սակայն Պառլամենտի կողմից ընտրության պարագայում ամենաընդունելի տարբերակն է

<sup>11</sup> CDL-AD(2015)002, Final Opinion on the revised draft Law on special public Prosecutor's office of Montenegro

<sup>12</sup> CDL-AD(2012)008, Opinion on Act CLXIII of 2011 on the Prosecution Service and Act CLXIV of 2011 on the Status of the Prosecutor General, Prosecutors and other Prosecution Employees and the Prosecution Career of Hungary

հնարավորինս կոնսենսուսային ընտրությունը<sup>13</sup>: Խորհրդարանի կողմից ընտրվելու պարագայում լավագույն տարբերակներից մեկը ձայների **որակյալ մեծամասնությամբ** ընտրության ապահովումն է<sup>14</sup>: Ընտրությունը ձայների 2/3-ով կամ 3/5-ով նախատեսելը հիմնավորում պահանջող, միևնույն ժամանակ ավելի քաղաքական, քան իրավական հարց է:

Գլխավոր դատախազի պաշտոնավարման համար պետք է նախատեսվի մեկանգամյա ժամկետ կամ 5 տարուց ավել կամ մինչ կենսաթոշակի անցնելը: Այս առնչությամբ, օրինակ, 7 տարի ժամկետով պաշտոնավարումը ցանկալի տարբերակ է, քանի որ մի կողմից բավականին երկար է և ավելին, քան օրինակ Կառավարության պաշտոնավարման ժամկետը, և մյուս կողմից վերացնում է կրկին ընտրվելու ռիսկերը:<sup>15</sup> Եթե ներպետական օրենսդրությունը նույն անձին կրկին ընտրվելու հնարավորություն է տալիս, ապա կարող է օբյեկտիվ կասկածներ ձևավորվել, որ գործող գլխավոր դատախազը կարող է այդ նպատակով իր գործունեությամբ գոհացնել իշխող ուժին: Կարևոր է նաեւ, որ գլխավոր դատախազի ընտրության ու պաշտոնավարման ժամկետը չհամընկնի խորհրդարանի գործունեության ժամկետի հետ, ինչը կխթանի դատախազական համակարգի կայունությունն ու անկախությունը:

Միևնույն ժամանակ, գլխավոր դատախազի պաշտոնում աշխատած անձին պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո պետք է հնարավորություն տալ դիմել այլ պաշտոնների<sup>16</sup>:

Գլխավոր դատախազի պաշտոնից ազատումը պետք է համահունչ լինի նշանակման ընթացակարգին ու երաշխիքներին: Պաշտոնավարման ժամկետից առաջ պաշտոնից ազատումը մի կողմից հանրության համար զգայական, մյուս կողմից քաղաքական որոշման կասկածի տեղիք կարող է տալ: Ըստ այդմ, անհրաժեշտ է, որ այն լինի թափանցիկ և հիմնվի օբյեկտիվ չափանիշների և օրենքով նախատեսված հիմքերի վրա, դատախազական խորհուրդը՝ որպես կենտրոնական, անկախ մարմին, այս

<sup>13</sup> CDL-AD(2016)009, Final Opinion on the revised draft constitutional amendments on the Judiciary (15 January 2016) of Albania

<sup>14</sup> The Independence of Prosecutors in Eastern Europe Central Asia and Asia Pacific, OECD, 2020

<sup>15</sup> CDL-AD(2015)005, Joint Opinion on the draft Law on the Prosecution Service of the Republic of Moldova

<sup>16</sup> CDL-AD(2010)040, European Standards as regards the independence of the judicial system: Part II - the Prosecution Service

ընթացակարգում կարևորագույն դերակատարում պետք է ունենա: Չպետք է նախատեսել այնպիսի ընթացակարգեր կամ հիմքեր, որոնց հիման վրա պաշտոնից ազատման հարցը ամբողջությամբ կմնա խորհրդարանի, կառավարության կամ այլ քաղաքական մարմնի վրա: Դատախազը այդ գործընթացում պետք է արդար դատաքննության ողջ երաշխիքակազմից օգտվի:

## Դատախազների ընտրությունը

Վենետիկի հանձնաժողովը դատախազների ընտրության կարգի հարցում պառլամենտի կողմից որակյալ մեծամասնությամբ ընտրությունը սահմանել է որպես իշխող կուսակցության կողմից վերահսկելի գործընթաց, ինչը չի համապատասխանում եվրոպական ստանդարտներին<sup>17</sup>: Խորհրդարանին նշանակման լիազորությունների վերապահումը ունակ է մեծացնել գործընթացի քաղաքականացման ռիսկերը: Ըստ այդմ, ցանկալի է, որ դատախազների ընտրությունը կազմակերպվի քաղձառայողների նշանակման ընթացակարգին համահունչ՝ հաշվի առնելով նրանց փորձառությունը:

Դատախազի պաշտոնի նշանակումը ըստ այդմ հնարավոր է գլխավոր դատախազի կողմից՝ համապատասխան Խորհրդի ներկայացման հիման վրա, ընդ որում, դատախազի թեկնածության մերժումը պետք է հիմնավորված լինի:

Այստեղ կրկին՝ դատախազների նշանակման գործընթացում կենտրոնական դերը պետք է վերապահված լինի ոչ թե Խորհրդարանին, այլ Դատախազական Խորհրդին, ինչը կնվազեցնի քաղաքական ազդեցության գործոնը<sup>18</sup>:

Կարևոր է նշանակման գործընթացում փորձագիտական կարծիքի առկայությունը, ինչը հնարավոր է ապահովել անկախ գործող Դատախազական Խորհրդի կամ ավագ դատախազների խորհրդի միջոցով, որոնց փորձառությունը թույլ կտա նշանակման ներկայացնել լավագույն թեկնածուներին: Այս առնչությամբ ավելի տարածում է

---

<sup>17</sup> CDL-AD(2007)047, Opinion on the Constitution of Montenegro, §104;

See also CDL-AD(2008)005, Opinion on the Draft Amendments to the Law on the State Prosecutor of Montenegro

<sup>18</sup> Ibid 17

գտնում փորձագիտական մարմնի կարևորությունը, որը և ապահովում է կարողությունների հիման վրա դատախազների նշանակումը:

Եվրոպական երկրների մեծ մասը դատախազների ընտրության համար պատասխանատու մարմնի/խորհրդի կազմում նախատեսում են այլ մասնագետների ներգրավվածություն եւս, օրինակ, ոչ դատախազ իրավաբաններ, դատավորներ:

Ալբանիայում, օրինակ, Դատախազական Խորհուրդը բաղկացած է 11 անդամներից, որից 6 անդամները դատախազական համակարգից և անմիջականորեն դատախազների կողմից ընտրված դատախազներ են: Մնացած 5 անդամները ընտրվում են Խորհրդարանի կողմից և չեն հանդիսանում դատախազ: Վերջիններս պետք է առնվազն 15 տարվա իրավաբանական ոլորտի մասնագիտական փորձ ունենան, ցուցաբերեն անձնային բարձր և մասնագիտական բարեվարքություն: Մեկ անդամ ներկայացվում է քաղհասարակության կողմից: Անդամները պետք է վերջին 10 տարում գերծ լինեն քաղաքական պաշտոններից ու կուսակցական պատկանելիությունից: Խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի ձևավորումից հետո առաջին նիստին՝ ոչ-դատախազ անդամների կողմից: Անդամները ընտրվում են 5 տարի ժամկետով առանց վերընտրման հնարավորության<sup>19</sup>:

Դատախազական Խորհուրդը իր հերթին կարող է ունենալ թեկնածուների գրավոր քննության կազմակերպման համար պատասխանատու համապատասխան հանձնաժողով: Անկողմնակալություն և արդար ընտրություն ապահովելու համար, ցանկալի է նաև ապահովել արտաքին մասնագիտական մասնակցություն<sup>20</sup>:

Վրաստանում Դատախազական խորհուրդը կազմված է 15 անդամներից: Խորհրդի անդամների մեջ եղել է նաև Արդարադատության նախարարը՝ հանդիսանալով խորհրդի նախագահը: 2018 թվականին Վրաստանի Դատախազության մասին հիմնարար օրենքում տեղի ունեցած փոփոխություններից հետո արդարադատության նախարարը այլևս խորհրդի անդամ չի հանդիսանում, եւ խորհուրդը նախագահում է Գլխավոր դատախազը<sup>21</sup>: Անդամների մեծամասնությունը ընտրվում են

<sup>19</sup> The Independence of Prosecutors in Eastern Europe, Central Asia and Asia Pacific, OECD, 2020

<sup>20</sup> CDL-AD(2014)042, Interim Opinion on the Draft Law on the State Prosecution Office of Montenegro

<sup>21</sup> CDL- REF (2018)055 Venice Commission Draft organic law on the Prosecutors' office and explanatory note [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2018\)055-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2018)055-e)

դատախազների կողմից, երկու անդամ հանդիսանում են պատգամավոր և ընտրվում Խորհրդարանական մեծամասնության ու փոքրամասնության կողմից, Դատական խորհրդի կողմից ընտրված երկու դատավորներ և Խորհրդարանի կողմից ընտրված երկու անդամներ՝ ներկայացված Բարձրագույն ուսումնական հաստատությունների ու քաղաքացիական հասարակության կողմից<sup>22</sup>:

Մոլդովայում գործող Դատախազական Բարձր Խորհուրդը կազմված է 12 անդամներից՝ գլխավոր դատախազը, արդարադատության նախարարը, Գազաուզ ինքնավար մարզի մարզային դատախազը և բարձր մագիստրոսների խորհրդի նախագահը ի պաշտոնե հանդիսանում են Խորհրդի անդամ: Դատախազների ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի կազմում ընտրվում են 5 դատախազներ, քաղհասարակության երեք թեկնածուներ բաց մրցույթով ընտրվում են Նախագահի, Խորհրդարանի և Գիտությունների ակադեմիայի կողմից:

Ուկրաինայի Դատախազական Խորհուրդը կազմված է Բարձր իրավաբանական դպրոցի կողմից ընտրված երկու իրավաբան-գիտնականներից և 11 դատախազներից՝ ընտրված գլխավոր դատախազության ու մարզային գրասենյակներից: Անդամ չեն կարող լինեն Կարգապահական և էթիկայի հանձնաժողովի դատախազ անդամները: Վերջինիս անդամները ընտրվում են առանձին ընթացակարգով՝ դատախազների ընդհանուր ժողովի կողմից:

Վենետիկյան հանձնաժողովը ընդունելի է համարում դատախազների նշանակման գործում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասնագիտական խորհրդատվական մարմինների առկայությունը: Կոնկրետ մոդելի ընտրությունը կախված է տվյալ դատախազական համակարգից:

Գլխավոր դատախազը պետք է ունենա խորհրդատվական մարմին, բաղկացած ինչպես ավագ դատախազներից, այնպես էլ արտաքին, ոչ դատախազական համակարգից, մասնագետներից<sup>23</sup>:

---

<sup>22</sup> Ibid 5

<sup>23</sup> CDL-P(2018)001 Venice Commission Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Prosecutors

## Նշանակման ընթացակարգը

Ինչ վերաբերում է նշանակման ընթացակարգին, ապա որպես ընդհանուր կանոն նշանակման ենթակա են այն թեկնածուները, ովքեր անցել են մրցութային քննությունը:

Նշանակման գործընթացը պետք է սկսվի առկա հաստիքների վերաբերյալ հրապարակային հայտարարությունից, որը պետք է հնարավորինս տարածվի: Որից հետո Դատախազական կամ Դատական Խորհրդի կողմից հատուկ ձևավորված ստորաբաժանումը պետք է գրանցի ներկայացվող հայտերը: Կարևոր է ապահովել թեկնածուների կողմից ուղիղ հայտ ներկայացնելու հնարավորությունը<sup>24</sup>:

Վենետիկի հանձնաժողովը նշանակման գործընթացում կարևորել է թեկնածուների մասնագիտական որակավորման վերաբերյալ խորհրդատվության ստացումը հատուկ մարմիններից, ինչպիսիք են իրավաբանական համայնքն ու քաղհասարակությունը<sup>25</sup>:

Դատախազների համար պաշտոնից ազատումը հնարավոր է վրա հասնի կարգապահական խախտման եւ վարույթի արդյունքում:

Պաշտոնից ազատման դեպքում գլխավոր դատախազը, ինչպես նաև համակարգի մնացած դատախազները պետք է արդար դատաքննության հնարավորություն ունենան<sup>26</sup>: Ինչը ենթադրում է նաև բողոքարկման մեխանիզմների հասանելիություն:

## Դատախազներին ներկայացվող պահանջները

Ինչպես գլխավոր դատախազի, այնպես էլ այլ դատախազների պաշտոնում նշանակումները պետք է հենվեն օբյեկտիվ չափանիշների ու պահանջների վրա: Այդ

---

<sup>24</sup> Ibid 12- CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina

<sup>25</sup> CDL-AD(2015)039, Joint Opinion of the Venice Commission, the Consultative Council of European Prosecutors (CCPE) and OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR), on the draft Amendments to the Law on the Prosecutor's Office of Georgia

<sup>26</sup> Ibid 2



չափանիշները պետք է նախապես օրենքով սահմանված լինեն, կիրառվեն թափանցիկ գործընթացում և կայացված որոշումները լինեն հիմնավորված<sup>27</sup>:

Որպես ընդհանուր մոտեցում, այդպիսի չափանիշների ցանկին են դասվում տվյալ երկրի քաղաքացիության առկայությունը, աշխատանքին խանգարող հիվանդությունների բացակայությունը, մասնագիտական կարողությունները, իրավաբանական որակավորումը և դատվածության բացակայությունը<sup>28</sup>:

Իրավաբանական կրթության մասով մոտեցումը հանգում է նրան, որ որպես դատախազ կարող է աշխատել այն մասնագետը, ով ունի համապատասխան իրավաբանական կրթություն, բարեհաջող է հանձնել թեկնածուից պահանջվող քննությունները և համապատասխան վերապատրաստում անցել:

Առողջությանը ներկայացվող պահանջների առնչությամբ պետք է նախատեսել կոնկրետ եւ հիմնավոր սահմանափակումներ: Մինևույն ժամանակ, ապահովել գաղտնիության ու մասնավոր կյանքի պաշտպանությունը:

Ընդհանուր մասնագիտական պահանջներին զուգահեռ, հնարավոր է նախատեսել նաեւ անձնային չափանիշներ, ինչպիսիք են բարեխղճությունը, անթերի համբավն ու հեղինակությունը, մասնագիտական էթիկայի նկատմամբ հարգանք: Հատկապես նոր ձևավորվող ժողովրդավարություններում դատախազներին նման պահանջներ ներկայացնելը առավելագույնս նպաստում է համակարգի արդյունավետ գործունեությանը:

Այս ամենին զուգահեռ, կարևոր է նաև թեկնածուների առնչությամբ կայացված որոշումները դատական բողոքարկման հնարավորություն տալը:

---

<sup>27</sup> CDL-AD(2013)006, Opinion on the Draft amendments to the Law on the Public Prosecution of Serbia

<sup>28</sup> CDL-AD(2014)008, Opinion on the draft Law on the High Judicial and Prosecutorial Council of Bosnia and Herzegovina

## Դատախազի ընտրություն և պաշտոնի նշանակում: ՀՀ Ներպետական կարգավորումներ

### Գլխավոր դատախազի ընտրությունն ու դատախազների նշանակումը

Գլխավոր դատախազի ընտրության վերաբերելի կարգավորումները, ներառյալ՝ ներկայացվող պահանջները, կարգավորվում են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

Նույն հոդվածի կարգավորումների համաձայն՝ նույն անձը չի կարող *ավելի քան երկու* անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ:

Ազգային ժողովի կողմից ընտրության կազմակերպումը իրականացվում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի կողմից՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով: Վերջինիս 145-րդ հոդվածը նախատեսում է իրավասու մշտական հանձնաժողովների առաջադրմամբ պաշտոնատար անձանց ընտրության կարգը:

Այսպես, հոդվածի առաջին մասի համաձայն՝ Գլխավոր դատախազի [...] ընտրությունն անցկացվում է համապատասխան պաշտոնատար անձի՝

- 1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան մեկ օր առաջ.
- 2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Թեկնածուն առաջարկվում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի որոշմամբ՝ խմբակցությունների առաջադրված մեկական թեկնածուների թվից:

Օրենքի համաձայն թեկնածուները կարող են առաջադրվել պաշտոնատար անձի՝

1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան ութսուն օր առաջ.

2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Պաշտոնատար անձի լիազորությունների ավարտից առնվազն հարյուր օր առաջ, ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, աշխատակազմն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավասու մշտական հանձնաժողովին և խմբակցություններին:

Թեկնածուն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին՝ տվյալ պարագայում Պետաիրավական հարցերով հանձնաժողովին է առաջադրվում խմբակցության որոշմամբ: Որոշման մեջ նշվում են թեկնածուի և նրան ներկայացնելու իրավասություն ունեցող խմբակցության ներկայացուցչի անունները, ազգանունները: Որոշմանը կցվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը, Իսկ գլխավոր դատախազի թեկնածուի դեպքում՝ նաև թեկնածուի լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը: Վերջինիս առնչությամբ պետք է արձանագրել, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը գլխավոր դատախազին ներկայացվող պահանջների եւ նշանակման կարգի վերաբերյալ դրույթներում բարեվարքության ստուգման վերաբերյալ կարգավորում չի նախատեսում, նման պահանջ սահմանված է ԱԺ կանոնակարգ օրենքով: Մինչդեռ, հաշվի առնելով բարեվարքության ստուգման կարևորությունը եւ նման պահանջը ոլորտային օրենքով սահմանված լինելու անհրաժեշտությունը, նպատակահարմար է գլխավոր դատախազի բարեվարքության ստուգումը նախատեսել նաեւ Դատախազության մասին օրենքով:

Սահմանադրության կամ օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը որոշումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է խմբակցությանը՝ նշելով պատճառների մասին:

Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց և առնվազն մեկ թեկնածու առաջադրվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Ազգային ժողովին թեկնածու

առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի առաջիկա հերթական նիստում կամ կարող է քննարկվել հանձնաժողովի արտահերթ նիստում: Իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում պաշտոնատար անձի մեկ թեկնածու: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահն Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը:

Այն դեպքում, երբ սահմանված ժամկետում իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին թեկնածու չի առաջարկում, ապա դրանից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ:

Գլխավոր դատախազը ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

Եթե վերը ներկայացված ժամկետում գլխավոր դատախազ չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ:

Եթե գլխավոր դատախազի նշանակման վերաբերյալ ներկայացված ներպետական կարգավորումները համեմատենք սույն զեկույցում արդեն իսկ ներկայացված միջազգային ստանդարտներին, ապա կնկատենք այդ գործընթացի անհամապատասխանելիություն ընդունված նորմերին:

Մասնավորապես, *ինչպես արդեն նշել էինք, չնայած նշանակումների վերաբերյալ գոյություն ունեցող մոդելների տարբերություններին, ցանկալի է, որ դատախազների նշանակումը, եւ մասնավորապես գլխավոր դատախազի նշանակումը, գերծ լինի քաղաքական ազդեցությունից կամ որևէ այլ ճնշումից*: Առանձնակի կարևորվում է, որ ընտրության ու նշանակման ընթացակարգը ապահովի հանրության վստահությունը այդ գործընթացի նկատմամբ: Հենց այդ նպատակով է խորհուրդ տրվում ընտրության և նշանակման գործընթացին ներգրավվել մասնագիտական, չքաղաքականացված փորձագիտական մոտեցում:

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ մեջբերված ներպետական կարգավորումներից, գլխավոր դատախազի ընտրության հարցում կենտրոնական դերակատարում ունեն ԱԺ մշտական հանձնաժողովն ու պատգամավորները:

ԱԺ կանոնակարգ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Մշտական հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Այսինքն, հանձնաժողովները կազմված են պատգամավորներից և գլխավոր դատախազի թեկնածուի առաջադրման և ընտրության գործում կենտրոնական դերակատարումը վերապահված է պատգամավորներին: Փորձագիտական կամ որևէ այլ մասնակցություն ընտրության ու նշանակման գործընթացում նախատեսված չէ:

Ավելին, մեծամասնություն ունեցող իշխող ուժը հանձնաժողովում ունենալով ձայների մեծամասնություն, անսահմանափակ հնարավորություն ունի առաջադրել իր թեկնածուին և հետո նաև ապահովել այդ թեկնածուի ընտրությունը: Ինչը նաև կարող է խոսել ընտրության գործընթացի քաղաքականացվածության մասին՝ նվազեցնելով հանրային վստահությունը:

Հարկ է նշել, որ դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023թթ ռազմավարությամբ Դատախազության համակարգի բարեփոխումը նախատեսված էր որպես առանձին ռազմավարական ուղղություն, որի համար, ի թիվս այլնի, նախատեսվում էր նաև «սահմանել, որ ԱԺ մշտական հանձնաժողովի կողմից գլխավոր դատախազի թեկնածուի ընտրության գործընթացին անկախ փորձագետների ներգրավումը լինի պարտադիր /ուժ կարծիքն ունենալու է խորհրդատվական նշանակություն<sup>29</sup>/:

ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 2022 թվականի ապրիլին ներկայացվել է Դատական եւ իրավական բարեփոխումների նոր ծրագիր, որտեղ դատախազության համակարգին առնչվող առանձին ուղղություն նախատեսված չէ: Ինչ վերաբերում է նախորդ ծրագրով դատախազության համակարգի բարեփոխմանն

<sup>29</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

ՀՀ Կառավարության որոշում ՀՀ Դատական եւ իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը եւ դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին

ուղղված վերոնշյալ եւ այլ գործողություններին, ապա դրանք կյանքի չեն կոչվել, չնայած այն հանգամանքին, որ ռազմավարությունը ընդունվելուց հետո անցել էր շուրջ 3 տարի:

Դեռեւս 2015 թվականին ՀՀ իշխանություններին այս հարցի կապակցությամբ առաջարկ է ներկայացվել ԵՄ Կոռուպցիայի դեմ պայքարի փորձագիտական խմբի կողմից, որի համաձայն անհրաժեշտ է ընտրության, նշանակման և պաշտոնից ազատման հարցում ներգրավվել փորձագետների և այդ գործընթացը դարձնել առավել թափանցիկ<sup>30</sup>: Նման առաջարկություն ներկայացվել է հատկապես հաշվի առնելով ՀՀ-ում դատական իշխանության և դատախազության նկատմամբ տիրող հանրային անվստահության վիճակը:

## Գլխավոր դատախազին և դատախազներին ներկայացվող պահանջները

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը նախատեսում է ՀՀ Գլխավոր դատախազին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

Միաժամանակ, Գլխավոր դատախազը պետք է բավարարի Դատախազության մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին<sup>31</sup>, այն է՝ ՀՀ-ում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում և

<sup>30</sup> GRECO Eval IV Rep (2015), Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, Evaluation report ARMENIA, 12-16 October 2015

<sup>31</sup> Դատախազության մասին ՀՀ օրենք, հոդված 35, 5-րդ մաս:

տիրապետում է հայերենին<sup>32</sup>, ինչպես նաև չպետք է առկա լինի Օրենքի 34-րդ նախատեսված որևէ սահմանափակում:

Օրենքի 34-րդ հոդվածը սահմանում է դատախազի պաշտոնում նշանակվելու սահմանափակումները: Մասնավորապես, դատախազ չի կարող նշանակվել այն անձը, ով՝

- դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- որը դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, իսկ անգոյշ հանցագործության դեպքում՝ մինչև դատվածությունը չի մարվել կամ հանվել,
- ունի դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն,
- չի անցել պարտադիր զինվորական ծառայություն, բացառությամբ այն անձանց, որոնք ազատվել են նման ծառայությունից օրենքով նախատեսված կարգով ու հիմքով,
- որի նկատմամբ դիտավորյալ հանցագործության համար հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով,
- ունի նաեւ այլ պետության քաղաքացիություն,
- նախկինում դատախազի կամ դատավորի կամ քննիչի պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման արդյունքում, եթե կարգապահական տույժի կիրառումից չի անցել մեկ տարի,
- օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում որևէ պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

Դատախազության մասին օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ դատախազ կարող է նշանակվել 22-ից մինչև 65 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը՝

---

<sup>32</sup> Դատախազության մասին ՀՀ օրենք, հոդված 33, 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր:

- Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով,
- Տիրապետում է հայերենին
- Որի նկատմամբ չեն տարածվում օրենքով սահմանված սահմանափակումները,
- ավարտել է համապատասխան ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում:

Օրենքի կարգավորումների համատեքստում խնդրահարույց է սակայն դատախազների պաշտոնի նշանակման նվազագույն տարիքը: Դատախազի պաշտոնի համար 22 տարեկան նախատեսելը մտահոգիչ է այն առումով, որ այդ տարիքում ձևավորված մասնագիտական հմտություններն ու անձնային որակները դեռևս բավարար չեն դատախազի լուրջ պաշտոնը ստանձնելու համար:

Նմանապես, Օրենքի կարգավորումները և դրա հիման վրա գործող Կարգը չեն պարունակում դատախազներից պահանջվող անձնային որակները բացահատող ու գնահատող օբյեկտիվ չափանիշներ: Ավելին, Օրենքը չի նախատեսում դատախազների թեկնածուների համար աշխատանքային գործունեության պահանջներ

## **Գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը**

Ներպետական կարգավորումների համաձայն՝ գլխավոր դատախազն ընտրվում է վեց տարի ժամկետով և նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազի պաշտոնում:

Ինչպես արդեն ներկայացվել է, գլխավոր դատախազի պաշտոնավարման համար պետք է նախատեսվի մեկանգամյա ժամկետ՝ կամ 5 տարուց ավել կամ ցմահ: Այս առնչությամբ նույն անձի վերստին ընտրվելու հնարավորությունը իշխող կամ նոր



ընտրված ուժի հետ սերտաճելու օբյեկտիվ ռիսկեր կարող է տալ: Ինչի առնչությամբ ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետը ենթակա է փոփոխության եւ/կամ ընտրության գործընթացի օբյեկտիվության լրացուցիչ երաշխիքների:

## Գլխավոր դատախազի լիազորությունների դադարումը

Օրենքի 63-րդ հոդվածը նախատեսում է գլխավոր դատախազի լիազորությունների դադարեցման պայմաններն ու կարգը: Այսպես, գլխավոր դատախազի լիազորությունները համարվում են դադարած, երբ լրացել է նրա պաշտոնավարման ժամկետը՝ պաշտոնի ստանձնմանը հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

Լիազորությունների վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

- 1) դատախազի պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 65 տարին լրանալը.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը.
- 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրան անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելը.
- 4) նրա մահը.
- 5) օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ կամ 7-րդ կետերով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալը.
- 6) նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը.
- 7) դատախազի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելը կամ քրեական հետապնդում չիրականացնելը ոչ արդարացնող հիմքով.
- 8) հրաժարականի դիմում ներկայացնելը Ազգային ժողով: Հրաժարականի դեպքում գլխավոր դատախազի լիազորությունները դադարում են, եթե գլխավոր դատախազի կողմից հրաժարականի դիմումը ներկայացվելուց ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում կրկին հրաժարականի դիմում է ներկայացվում:

Վերոնշյալ դեպքերում Ազգային ժողովի նախագահը համապատասխան տեղեկությունն ստանալու պահից պաշտոնական հաղորդագրություն է տարածում գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ դադարելու մասին:

Օրենքը սահմանում է նաև, որ Գլխավոր դատախազի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել այն դեպքերում, երբ՝

1) նա հիվանդացել է ծանր հիվանդությամբ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնական պարտականությունների կատարմանը.

2) կատարել է օրենքի կամ դատախազի վարքագծի կանոնների խախտում, որը վարկաբեկել է դատախազության հեղինակությունը.

3) խախտել է օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները.

4) առկա են իր լիազորությունների կատարման այլ անհաղթահարելի խոչընդոտներ:

Օրենքը սահմանել է, որ վերջին 4 դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին: Այսինքն, օրենսդիր մարմնի մեծամասնություն ունեցող ուժը հնարավորություն ունի բավարար ձայներով դադարեցնել գլխավոր դատախազի լիազորությունները:

## **Դատախազների ընտրության և նշանակման կարգը**

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով նախատեսվում է դատախազին պաշտոնի նշանակելու կարգը:

Հոդվածի համաձայն նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-5-րդ, 6-րդ կետերով սահմանված պաշտոններում պաշտոնի է նշանակում գլխավոր դատախազը՝ 39-րդ հոդվածով սահմանված առաջխաղացման ցուցակներից:

Առաջխաղացման ցուցակները կազմվում են ՀՀ Արդարադատության ակադեմիայում ուսուցման արդյունքների ամփոփման ավարտին և հիման վրա: «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի առաջին մասի

համաձայն՝ «Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձր համարվում է մասնագիտական պատրաստումն անցած, եթե նա առարկայական կուրսերից բոլոր քննությունների արդյունքներով ստացել է դրական գնահատական և դրական է գնահատվել փորձաշրջանի արդյունքներով»: Հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում, հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի՝ Ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորը հաշվարկվում է առարկայական կուրսերից հանձնած բոլոր քննությունների գնահատականների հիման վրա»:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի վերոնշյալ կետերը նախատեսում են՝

- գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, Երևան քաղաքի դատախազը, զինվորական դատախազի տեղակալը

- գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար տեղակալը, Երևան քաղաքի դատախազի տեղակալ, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը, մարզի դատախազը, կայազորի զինվորական դատախազը, գլխավոր դատախազության ավագ դատախազը

- գլխավոր դատախազության դատախազ, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ավագ դատախազներ և դատախազներ, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների տեղակալներ, մարզերի դատախազների տեղակալներ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազներ, կայազորների զինվորական դատախազների տեղակալներ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ,

- Երևան քաղաքի դատախազության դատախազներ, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազությունների ավագ դատախազներ և դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության

կառուցվածքային ստորաբաժանման ավագ դատախազներ և դատախազներ, զինվորական կենտրոնական դատախազության դատախազ:

Ինչպես արդեն ներկայացվեց 42-րդ հոդվածը սահմանում է, որ դատախազին պաշտոնի նշանակում է գլխավոր դատախազը՝ Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ավարտի եւ արդյունքների ամփոփման հիման վրա: Ոչ «Դատախազության մասին», ոչ էլ «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքները լրացուցիչ չեն հստակեցնում, թե ինչ սկզբունքով եւ ընթացակարգով է տեղի ունենում ցուցակներից ընտրությունն ու նշանակումը, ինչ չափանիշի հիման վրա են ուսումնառությունն ստացած թեկնածուները նախապատվություն ստանում եւ նշանակվում գլխավոր դատախազի կողմից:

Ըստ էության, համակարգի դատախազական պաշտոններում նշանակումն ու համալրումը իրականացվում է բացառապես գլխավոր դատախազի կողմից:

Ինչ վերաբերում է դատախազների թեկնածությունների ցուցակի կազմմանը, ապա նույն օրենքով տրված են նաեւ ցուցակների կազմման վերաբերելի կարգավորումները:

Մասնավորապես, դատախազների թեկնածությունների ցուցակը համալրվում է **բաց և փակ մրցույթի միջոցով**:

Բաց մրցույթն անցկացնում է դատախազության որակավորման հանձնաժողովը, որպես կանոն, տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր տարվա հունվար ամսին: Անհրաժեշտության դեպքում արտահերթ բաց մրցույթ կարող է անցկացվել գլխավոր դատախազի հանձնարարությամբ: Դատախազների թեկնածությունների ցուցակում լրացումներ կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ: Բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանվում է գլխավոր դատախազի հրամանով:

#### *Բաց մրցույթի անցկացման ընթացակարգը*

Օրենքի կարգավորումներից զատ, բաց մրցույթի կազմակերպման ընթացքն ու պահանջները լրացուցիչ կարգավորում ստացել են դատախազների

թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման և դատախազների թեկնածությունների ցուցակը կազմելու կարգով<sup>33</sup>:

Որակավորման հանձնաժողովը դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի ժամկետի, վայրի, անհրաժեշտ փաստաթղթերի մասին առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում է հայտարարություն 3000 տպաքանակ ունեցող մամուլում և դատախազության կայքէջում:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձը պարտավոր է ներկայացնել՝

1) դիմում որակավորման հանձնաժողովի նախագահի անունով.

2) անձը հաստատող փաստաթուղթ.

3) հավակնորդի բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ (օտարերկրյա պետությունում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության որակավորման աստիճանների համարժեքության և դիպլոմների ճանաչելիության մասին).

4) հավակնորդի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանի կոչում ձեռք բերելուց հետո իրականացված մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան ապացույցներ (այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները).

5) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է).

---

33

[https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP\\_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQHH2LthTWzKVYoyucnNfmag](https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQHH2LthTWzKVYoyucnNfmag)

6) դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ.

7) իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ (եթե հավակնորդը իրավաբանական գիտությունների թեկնածու կամ դոկտոր է), իսկ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքում՝ նաև գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

8) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ (այսուհետ՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ<sup>34</sup>):

Ինչ վերաբերում է բարեվարքության ստուգմանը, ապա կարգավորումների համաձայն՝ հայտերի ընդունումից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովի նախագահը թեկնածուների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո՝ մրցույթից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին:

Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար բաց մրցույթի անցկացման և դատախազների թեկնածությունների ցուցակը կազմելու կարգի (այսուհետ՝ Կարգ) համաձայն՝ բաց մրցույթը, կախված հավակնորդների թվաքանակից, կարող է անցկացվել մեկից ավելի օրերի ընթացքում<sup>35</sup>:

<sup>34</sup> Վերջինս օրենսդրությամբ սահմանված նոր ընթացակարգ է, որը հնարավոր կլինի գնահատել պրակտիկ կիրառելիությունից հետո:

<sup>35</sup>

[https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP\\_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQH2LthTWzKVYoyucnNfmag](https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQH2LthTWzKVYoyucnNfmag)

Կարգի համաձայն՝ բաց մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով, բացառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանի առկայություն ունեցող թեկնածուների:

Բաց մրցույթի քննական Հարցաշարը մրցույթի մասին հայտարարության հետ տեղադրվում է դատախազության կայքէջում<sup>36</sup>:

Հայտարարության մեջ սակայն չի ներկայացվում տեղեկություն թափուր հաստիքների ու քանակի մասին, ինչը դիմողների համար կանխատեսելիության ու որոշակիության ապահովման տեսանկյունից խնդրահարույց է:

Մինչև մրցույթի անցկացման սկիզբը գումարած նիստում հանձնաժողովը քննության է առնում ներկայացված փաստաթղթերը և կայացնում համապատասխան որոշում՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ մասնակցությունը չթույլատրելու մասին: Հանձնաժողովն իր որոշմամբ հաստատում է մրցույթի մասնակիցների ցուցակը: Մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու կամ մասնակցությունը չթույլատրելու մասին հանձնաժողովի որոշումը հանձնվում է մրցույթի մասնակցին:

Հարցազրույցին մասնակցելու թույլտվություն չտալու որոշում կայացվում է, եթե հայտնաբերվել է փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն, եթե առկա է դատախազի պաշտոնին նշանակվելուն խոչընդոտող՝ օրենքով նախատեսված փաստ, կամ, եթե հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը լիարժեք չեն:

Ըստ կարգի՝ հարցազրույցն անցկացնում է հանձնաժողովը՝ յուրաքանչյուր հավակնորդի հետ առանձին:

Որակավորման հանձնաժողովն ստուգում է հայտատուի մասնագիտական պատրաստվածությունը, գործնական հմտությունները, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածությունը, նրա անձնական որակները և արժանիքները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական

---

<sup>36</sup> <https://www.prosecutor.am/am/mn/8352/>

կարողություններ և այլն), ինչպես նաև նրա ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին:

Հենվելով օրենքի վերոնշյալ դրույթների վրա՝ կարգը լրացուցիչ սահմանում է, որ հարցազրույցը հայտատուի մասնագիտական պատրաստվածության, գործնական հմտությունների, իր կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածության, նրա անձնական որակների և արժանիքների (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ և այլն) հատկանիշների ստուգումն է, որը կատարվում է այդ նպատակով կազմված հարցաշարի հիման վրա տրված հարցերի միջոցով:

Այստեղ հարկ է նշել, որ օրենքը և վերոնշյալ կարգը չնայած նախատեսում են մրցույթի ընդհանուր ընթացակարգը, սակայն չի հստակեցվում, թե ինչպես է թեկնածուի կարողությունների ու որակների ստուգումը տեղի ունենում, ինչ չափանիշների և/կամ գնահատման սանդղակի հիման վրա են այդ կարողությունները գնահատվում և ըստ այդմ որոշում կայացվում:

Կարգը այս առնչությամբ միայն նախատեսում է, որ հանձնաժողովի հարցադրումները պետք է ձևակերպվեն հստակ և հավակնորդի համար լինեն հասկանալի: Հարցադրումների վերաբերյալ ներկայացվող այլ պահանջներ սակայն սահմանված չեն:

Ըստ նույն Կարգի՝ Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդին կարող է տալ առավելագույնը երկու հարց, սակայն ընդհանուր հարցերի քանակը պետք է լինի առնվազն վեցը: Յուրաքանչյուր հարցից հետո հարց տվող հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ, մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելը, իսկ սխալ կամ մասնակի սխալ պատասխանի դեպքում նշում է ճիշտ պատասխանը: Հարցին պատասխանելու համար հավակնորդին ցանկության դեպքում տրվում է ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու համար: Ինչ վերաբերում է որոշումների կայացմանը, ապա Հանձնաժողովը որոշումները կայացնում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:



Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված: Քվեարկության արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի կողմից, ինչի մասին կազմվում է արձանագրություն: Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո, նույն օրը՝ անմիջապես:

Օրենքը սահմանում է նաև, որ այն դեպքերում, երբ հայտատուն իրավաբանական գիտությունների թեկնածու է կամ իրավաբանական գիտությունների դոկտոր և ունի գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժ, ապա որակավորման հանձնաժողովն ստուգում է միայն հայտատուի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքով նախատեսված պահանջներին, նրա անձնական որակները և արժանիքները՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար (ինքնաստիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում):

Ինչպես արդեն վերևում ներկայացվեց, Կարգը նման թեկնածուներին դիտարկում է որպես բացառիկ դեպք և հարցազրույցի անցկացում չի պահանջվում: Նման կարգավորումը նույնպես խնդրահարույց է, քանի որ, փաստացի, դատախազի պաշտոնում նշանակումը տեղի է ունենում միայն փաստաթղթային ստուգման եղանակով և թեկնածուի իրական որակներն ու մասնագիտական կարողությունները հնարավոր է իսպառ չպարզվեն: Ավելին, անձի իրավաբանական գիտությունների թեկնածու լինելը որևէ կերպ չի կարող հավաստել դատախազի գործառույթների տիրապետումը՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակում:

Դատախազության մասին օրենքը նախատեսում է, որ որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Այն հայտատուների թեկնածությունները, որոնց վերաբերյալ որակավորման հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն, ներկայացվում են գլխավոր

դատախազին: Գլխավոր դատախազին են տրամադրվում նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված խորհրդատվական եզրակացությունները: Գլխավոր դատախազն իրավունք ունի ներկայացված հայտատուներին ընդգրկելու դատախազների թեկնածությունների ցուցակում: Ցուցակում հայտատուին չընդգրկելու վերաբերյալ գլխավոր դատախազը կայացնում է պատճառաբանված որոշում, որը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով:

Ուսումն ավարտելուց հետո դատախազի պաշտոնում նշանակումը իրականացվում է գլխավոր դատախազի կողմից, որի պարագայում սակայն կրկին չափանիշներ չկան, եւ պարզ չէ, թե ինչպես է տվյալ դատախազը ընտրվում նշանակման համար:

### Փակ մրցույթ

Դատախազության մասին ՀՀ օրենքն ու Կարգը նախատեսում են, որ Դատախազների թեկնածությունների ցուցակում համալրում կատարելու համար գլխավոր դատախազի հանձնարարությամբ տարվա ընթացքում կարող է անցկացվել հավակնորդների փակ մրցույթ:

Ի տարբերություն բաց մրցույթի՝ փակ մրցույթի պարագայում հրապարակայնության առավել ցածր պահանջներ և պրակտիկա է գործում: Մասնավորապես, փակ մրցույթի վերաբերյալ մամուլում և դատախազության կայքէջում հայտարարություն չի հրապարակվում, հավակնորդները մրցույթի մասին տեղեկանում են գրավոր կամ բանավոր հրավերների միջոցով:

Ինչ վերաբերում է նրան, թե ովքեր կարող են մասնակցել փակ մրցույթին, ապա Կարգի համաձայն՝

Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող փակ մրցույթին մասնակցելու իրավունք ունեն.

1) դատախազի պաշտոնին նշանակվելու համար օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները բավարարող, օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասում նշված Հայաստանի Հանրապետության քաղաքացիները.

2) օրենքի 38-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով որակավորման

հանձնաժողովի կողմից հայտի ընդունման մերժումը դատական կարգով բողոքարկած հավակնորդները, եթե հայտի ընդունումը դատարանի կողմից ճանաչվել է անօրինական և համապատասխան բաց մրցույթն ավարտվել է:

Օրենքի վկայակոչած 38-րդ հոդվածի 10-րդ մասը նախատեսում է

Արդարադատության ակադեմիայում ուսումնառության դասընթացներից և քննություններից ազատման ենթակա անձանց, այն է այն թեկնածուներին, ովքեր՝

1) վերջին հինգ տարվա ընթացքում ունի դատավորի, դատախազի, քննիչի (քննչական բաժնի պետի, քննչական մարմնի ղեկավարի) պաշտոններում կամ փաստաբանական գործունեության առնվազն երեք տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող, մասնագիտական աշխատանքի ստաժ կամ

2) վերջին 10 տարվա ընթացքում ունի դատախազի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե պաշտոնից ազատվել է սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-6-րդ, 9-րդ կետերով և 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով կամ<sup>37</sup>

3) իրավաբանական գիտությունների դոկտոր է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն երեք տարվա ստաժ.

4) իրավաբանական գիտությունների թեկնածու է և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի առնվազն հինգ տարվա ստաժ:

Կարգը փակ մրցույթի առնչությամբ նույնպես սահմանում է, որ այն ղեպքերում, երբ հայտատուն իրավաբանական գիտությունների թեկնածու է կամ իրավաբանական գիտությունների դոկտոր և ունի գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժ, ապա հանձնաժողովը ստուգում է միայն հայտատուի կողմից ներկայացված

---

<sup>37</sup> 1. Դատախազին պաշտոնից ազատելու հիմք են՝

1) անձնական դիմումը.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը,

5) հաստիքի կրճատումը.

6) դատախազության կառուցվածքային այլ ստորաբաժանում կամ այլ դատախազություն փոխադրվելուց հրաժարվելը, դատախազության կառուցվածքային այն ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման ղեպքում, որտեղ նա պաշտոն է զբաղեցրել.

9) սույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգապահական տույժի նշանակումը.

փաստաթղթերի համապատասխանությունը օրենքով նախատեսված պահանջներին, նրա անձնական որակները և արժանիքները՝ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, վերլուծական կարողություններ, համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում):

Այստեղ կրկին կարող ենք արձանագրել, որ տեղի է ունենում թեկնածուի ստուգում միայն փաստաթղթային եղանակով, ինչը ռիսկային է դատախազի բարձր պաշտոնի համար:

Կարգով նախատեսվում է, որ փակ մրցույթի անցկացման մնացած հարցերը՝ մրցույթի հրավիրում, անցկացում, հարցազրույցի, մրցույթի արդյունքների ամփոփում, որոշումների կայացում, իրականացվում է բաց մրցույթի համար վերոնշյալ կանոններով:

Պետք է արձանագրել, որ փակ մրցույթի ընթացակարգը առավել խնդրահարույց է ոչ միայն հրապարակայնության երաշխիքների բացակայության տեսանկյունից, այլ նաև այն պատճառով, որ ընթացակարգի հիմքում դրվող չափանիշներն ու պահանջները տեսանելի չեն եւ չեն արտացոլում թեկնածուների կարողությունների գնահատումը: Մասնավորապես ընտրությունը չի իրականացվում մասնագիտական կարողությունների, անձնական որակների հիմնավոր ստուգման ու գնահատման արդյունքում: Փոխարենը, առաջին պլան կարող է մղվել որոշակի ակադեմիական կարգավիճակ, որը չբիսի և չբավարարի դատախազի պաշտոնից բխող գործառույթների իրականացումը:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձն արդարադատության ակադեմիայում անցնում է ուսումնառության ծրագիր: Կարգը նախատեսում է սակայն, որ անձը ազատվում է դասընթացներից և որակավորման քննություն հանձնելուց, եթե՝

1) ունի դատախազի, դատավորի, քննիչի պաշտոնում կամ փաստաբանի 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե չի անցել այդ պաշտոնը թողնելուց հետո 5 տարի.

- 2) իրավաբանական գիտությունների դոկտոր է.
- 3) իրավաբանական գիտությունների թեկնածու է, և ունի իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի 5 տարվա ստաժ:

Այս կարգավորումը ևս խնդրահարույց է, քանի որ իրավաբան-գիտնականների համար չի գործում որոշակի նեղ մասնագիտացման պահանջ, և պրակտիկայում հնարավոր է դատախազի պաշտոնի նշանակման նման արտոնություն տրվի այնպիսի թեկնածուի, որը ֆորմալ առումով բավարարում է վերը նշված պահանջը, սակայն բավարար փորձառություն և գիտելիքներ քրեական արդարադատության ոլորտում չունի:

## **Որակավորման հանձնաժողովի դերը դատախազի թեկնածուների ընտրության հարցում**

Գլխավոր դատախազի կողմից դատախազների պաշտոնում նշանակման գործընթացում ըստ էության կարևոր դերակատարում ունի որակավորման հանձնաժողովը:

«Դատախազության մասին» օրենքի 23-րդ հոդվածը նախատեսում է, որ գլխավոր դատախազին առընթեր գործում է էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:

Հոդվածի 3-րդ մասը նախատեսում է որակավորման հանձնաժողովի կազմը:

*Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն*

*ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:*

Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

Օրենքով սահմանված է նաև, որ հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

Վերը ներկայացված համալիր կարգավորումների ներկայացումը ցույց է տալիս, որ ինչպես գլխավոր դատախազի նշանակման, այնպես էլ վերջինիս կողմից դատախազների նշանակման գործում արտաքին անկախ փորձագիտական մասնակցություն գոյություն չունի:

Դատախազների նշանակման գործընթացում թեպետև նախատեսված է որակավորման հանձնաժողովը, սակայն վերջինս առավելապես կազմված է դատախազներից: Ընդ որում, ինչպես վերջիններս, այնպես էլ նախատեսված իրավաբան-գիտնականները նշանակվում են գլխավոր դատախազի կողմից: Այսինքն, չնայած հանձնաժողովի առկայությանը, բոլոր որոշումների կայացման մեջ հիմնական դերակատարումը վերապահված է գլխավոր դատախազին և բոլոր որոշումները կայացվում են նրա կողմից:

Օրենքը չի նախատեսում, թե ինչ սկզբունքով և ինչ չափանիշներով է իրականացվում դատախազ անդամների եւ իրավաբան-գիտնականների ընտրությունը, այն կրկին թողնված է գլխավոր դատախազի հայեցողությանն ու որոշմանը, ինչը թույլ է տալիս նշել նաև, որ հանձնաժողովի ձևավորման և գործունեության անկախության երաշխիքներ, ըստ էության, սահմանված չեն:

ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին 26.04.2021թ-ի հրամանով նախատեսված է հանձնաժողովի

կազմը, անդամության ստանձնման ժամկետը, հրամանի կատարման վերահսկողությունը՝ գլխավոր դատախազի կողմից<sup>38</sup>:

Սակայն հավելյալ տեղեկություն, թե ինչ ընթացակարգով, ինչ չափանիշների հիման վրա են իրավաբան-գիտնականները ներգրավվել, չի ներկայացվում:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ դատախազների թեկնածուների ընտրության կարգը խնդրահարույց է, քանի որ գործընթացում Գլխավոր դատախազի դերը մենաշնորհային է ոչ միայն հանձնաժողովի ձևավորման և անդամների նշանակման, այլ նաև թեկնածուների վերջնական ցուցակը հաստատելու հարցում:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- ՀՀ ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես գլխավոր դատախազի նշանակման, այնպես էլ վերջինիս կողմից դատախազների նշանակման գործում արտաքին փորձագիտական մասնակցություն նախատեսված չէ: Մասնավորապես, Գլխավոր դատախազի ընտրության գործընթացում կենտրոնական դերակատարումը վերապահված է ՀՀ ԱԺ պատգամավորներին՝ ի դեմս պետաիրավական հարցերով խմբակցության: Փորձագիտական կամ որևէ այլ մասնակցություն գլխավոր դատախազի ընտրության գործընթացում չի նախատեսվում:
- Դատախազության համակարգում դատախազների պաշտոնի նշանակումը նույնպես չի ենթադրում փորձագիտական ներգրավվածություն:
- Դատախազների պաշտոնի նշանակման գործում էական և կենտրոնական դերակատարում վերապահված է գլխավոր դատախազին՝ առանց ընտրության հիմքում դրված հստակ և գնահատելի չափանիշների
- Դատախազների պաշտոնի նշանակման համար անցկացվող բաց և փակ մրցույթների կազմակերպման կարգի ընդունումը նույնպես վերապահված է

38

[https://www.prosecutor.am/myfiles/files/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%202020/hraman%2042%20\(1\).pdf](https://www.prosecutor.am/myfiles/files/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%202020/hraman%2042%20(1).pdf)

գլխավոր դատախազին՝ բացառելով այլ դերակատարների ներգրավվածությունը

- Ավելին, փակ մրցույթի իրականացումը նախատեսվում է բացառապես գլխավոր դատախազի հանձնարարությամբ, ինչը հաշվետվողականության ու թափանցիկության տեսանկյունից խնդրահարույց է, քանի որ անցկացման հիմքերն ու ընթացակարգերը որոշակիացված չէ: և չի ապահովում հրապարակայնության սկզբունքի պահանջները
- Գլխավոր դատախազին է վերապահված նաեւ որակավորման հանձնաժողովի դատախազ անդամների ընտրության հարցը:
- Որակավորման հանձնաժողովի կազմում իրավաբան-գիտնականների նշանակումը նույնպես վերապահված է գլխավոր դատախազին, ինչը նշանակում է, որ հանձնաժողովի կազմի ձևավորման գործում կենտրոնական դերակատարումը կրկին թողնված է գլխավոր դատախազին:
- Խնդրահարույց է նաեւ այն հանգամանքը, որ օրենքով չի սահմանվում, թե ինչ սկզբունքով և չափանիշներով է իրականացվում իրավաբան-գիտնականների ընտրությունը, ինչի պայմաններում հայեցողություն է տրված գլխավոր դատախազին:
- Օրենքը դատախազի պաշտոնում նշանակման համար նախատեսել է բավականին երիտասարդ տարիք՝ այն է 22 տարեկանը, ինչը եւ մասնագիտական աշխատանքային և անձնային փորձառության տեսանկյունից բավարար չէ դատախազի պատասխանատու պաշտոնում աշխատելու համար:
- Ներպետական կարգավորումների համաձայն՝ Գլխավոր դատախազը ընտրվում է վեց տարի ժամկետով, ինչը ժամանակային առումով համընկնում է դատախազի պաշտոնավարման ժամկետի և յուրաքանչյուր անգամ նորընտիր խորհրդարանի կողմից նոր գլխավոր դատախազ նշանակելու ժամկետի հետ: Խորհրդարանի իշխող մեկ կուսակցության ձայների մեծամասնությամբ որոշում կայացնելու պայմաններում գլխավոր դատախազի ընտրության հարցը դառնում է խնդրահարույց և վերջինիս անկախությունը կարող է լուրջ կասկածների տակ դրվել՝ հաշվի առնելով կախվածությունը



իշխող խորհրդարանական ուժից: Նմանապես, խնդրահարույց է նույն անձին երկու անգամ ընտրվելու հնարավորություն տալ, քանի որ այս հարցի առնչությամբ նույնպես կարող են ի հայտ գալ վերընտրման գործընթացի քաղաքականացման ռիսկեր:

## Դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթի դիտարկում

2021 թվականի նոյեմբերի 19-ին ՀՀ Գլխավոր դատախազության պաշտոնական կայքում հայտարարություն է տարածվել դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի մասին<sup>39</sup>:

Հիմք ընդունելով տարածված հայտարարությունը՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը /այսուհետ՝ Կազմակերպություն/ դիմել է ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովին՝ անցկացվող բաց մրցույթին դիտորդություն իրականացնելու նպատակով:

---

<sup>39</sup> <https://www.prosecutor.am/am/mn/8352/>

Կազմակերպության գրությանն ի պատասխան գլխավոր դատախազությունից տեղեկացրել են, որ «Դատախազների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց եւ փակ մրցույթների կազմակերպման կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի հունվարի 29-ի N 8 եւ հոկտեմբերի 20-ի N 77 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 43 հրամանի 1-ին կետով սահմանված դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց եւ փակ մրցույթների կազմակերպման կարգի 40-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի որոշմամբ մրցույթին ներկա գտնվելու իրավունք ունեն մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ հրավիրված դիտորդներ»։ Կազմակերպությունը ըստ այդմ հրավիրված դիտորդի կարգավիճակով մասնակցել և դիտարկել է անցկացվող բաց մրցույթի ընթացքը։

### **Ընդհանուր տեղեկություններ մրցույթի վերաբերյալ**

Մրցույթը սկսվել է 2021 թվականի հունվարի 31-ին և անց է կացվել ՀՀ Գլխավոր դատախազության մասնաշենքում։

Մրցույթը անցկացվել և արդյունքները ամփոփվեն են ՀՀ Գլխավոր Դատախազին առընթեր Որակավորման Հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ կողմից՝ արդեն իսկ ներկայացված ընթացակարգով։

Դիմորդների ընդհանուր թիվը եղել է 89, ովքեր նախապես սահմանված կարգով ՀՀ Գլխավոր դատախազություն են ներկայացրել պահանջված փաստաթղթերը՝

- Դիմում՝ ուղղված ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովին
- Անձնագիր կամ նույնականացման քարտ
- Բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող փաստաթուղթ

- Հավակնորդի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանախի կոչում ձեռք բերելուց հետո իրականացված մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ
- Ինքնակենսագրական
- Պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ
- Դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին ՀՀ կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ
- Իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ, իսկ օրենքով սահմանված դեպքում նաև գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժի առկայությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով
- Տեղեկանք ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից՝ միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ
- Տեղեկանք ՀՀ դատական դեպարտամենիտից՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չլինելու վերաբերյալ
- Մեկ լուսանկար՝ 3\*4 չափսի
- Ցանկության դեպքում՝ երաշխավորագրեր
- «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

Կազմակերպության կողմից դիտարկվել է ընդհանուր 89 թեկնածուից թվով 47 –ի և 3 դատախազի առաջխաղացման հարցազրույց: Երեք Դատախազների առաջխաղացման մրցույթը նույնպես անց է կացվել այս մրցույթի շրջանակներում:

Դիտարկման ենթարկված հարցազրույցների արդյունքում Հանձնաժողովը դրական եզրակացություն տվել է 13 թեկնածուի, ըստ այդմ վերջիններիս ներառելով Գլխավոր դատախազին ներկայացվող դատախազների ցուցակում, որի հիման վրա վերջիններս հետագա ուսումնառությունը կշարունակեն ՀՀ Արդարադատության ակադեմիայում:

Առաջխաղացման ենթակա երեք գործող դատախազներից դրական եզրակացություն ստացել են երկուսը:

Հարցազրույցները նախատեսված են եղել հունվարի 31-ից փետրվարի 28-ը յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 14:30-ին՝ տեւելով մինչ ժամը 18:30-19:00 սահմանները: Կազմակերպության կողմից դիտարկվել են 2022 թվականի հունվարի 31-ից մինչ փետրվարի 18-ը ներառյալ անցկացված հարցազրույցները: Դիտարկված օրերից յուրաքանչյուրին հարցազրույցին մասնակցել են 8-9 թեկնածուներ:

Հարկ է նշել, որ դիտարկված հարցազրույցների օրերից եւ ոչ մեկի պարագայում հարցազրույցը նախատեսված ժամին չի սկսվել՝ հանձնաժողովի անդամների ուշացումների պատճառով, ինչը արժանացել է հանձնաժողովի նախագահի դիտողությանը: Արձանագրվել են նաեւ հարցազրույցը նախատեսված օրը չիրականացնելու եւ հետաձգելու դեպքեր եւս:

### **Հանձնաժողովի կազմը**

Ինչպես արդեն ներկայացվել էր, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից՝

Գևորգ Բաղդասարյան- Հանձնաժողովի նախագահ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

Սևակ Հովհաննիսյան - Հանձնաժողովի անդամ

Երևան քաղաքի դատախազ

Արտակ Հարությունյան - Հանձնաժողովի անդամ

ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ

Արմեն Մարուխյան - Հանձնաժողովի անդամ

ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ

Արթուր Անտոնյան - Հանձնաժողովի անդամ

Երևանի կայագործի դատախազ

Սերգեյ Առաքելյան - Հանձնաժողովի անդամ

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր. ի.գ.դ. (համաձայնությամբ)

Տաթևիկ Սուջյան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ)

Արա Գաբուզյան - Հանձնաժողովի անդամ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ. (համաձայնությամբ)

Տաթևիկ Դավթյան - Հանձնաժողովի անդամ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)

Արկադի Սահակյան - «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի իրավաբան, ՀՀ ՔԿՀ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհրդի անդամ

Դիտարկված բոլոր դեպքերում Հանձնաժողովը ներկա եղել է կազմի 6 անդամով, ինչը բավարար է եղել մրցույթի անցկացման համար, քանի որ անդամների առնվազն 2/3 բավարար է Հանձնաժողովի իրավագործության համար<sup>40</sup>: Հարցազրույցներից եւ ոչ

---

40

<https://www.prosecutor.am/am/%D4%B1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB->

մեկին չեն մասնակցել Հանձնաժողովի գիտնական անդամներ Ա. Սահակյանը և Ա. Գաբուզյանը: Հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամներից բոլոր հարցազրույցներին մասնակցել է Ս. Առաքելյանը:

## Մրցույթի թափանցիկություն և հրապարակայնություն

Հարկ է արձանագրել, որ ՀՀ Դատախազության համակարգը և համակարգում նշանակումների իրականացումը նախկինում չուսումնասիրված և մշտադիտարկման չենթարկված հարցերից է եղել: Ըստ այդմ, Կազմակերպության կողմից իրականացված դիտարկումը որպես այդպիսին եղել է առաջինը:

Այս առնչությամբ պետք է դրական որակել ինչպես դատախազության պատրաստակամությունը այդ առնչությամբ, այնպես էլ մրցույթի ընթացքում թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների ակնհայտ ապահովումը:

Մասնավորապես, մրցույթի հայտարարությունը և վերաբերելի ողջ տեղեկատվությունը նախապես հրապարակված և հասանելի է եղել ինչպես թեկնածուներին, այնպես էլ հանրությանը:

Մրցույթի ընթացքում Կազմակերպությունը ունեցել է անխոչընդոտ հնարավորություն դիտարկել ողջ գործընթացը՝ ներկա գտնվելով Հանձնաժողովի աշխատանքներին, ինչպես բուն հարցազրույցի փուլին, այնպես էլ արդյունքների ամփոփմանը, ինչը ողջունելի է և հուսադրող՝ համակարգի ապագային միտված բարեփոխումների առնչությամբ:

Դիտարկման արդյունքում Կազմակերպությանը հարցազրույցի ընթացքից, հարց ու պատասխաններից եւ վերջնական որոշումներից հասանելի են դարձել նաեւ տվյալներ թեկնածուների կողմից լրացված բարեվարքության թերթիկներից և Օրենքով ու Կարգով սահմանված կարգով Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի կողմից տրված եզրակացություններից:

---

[%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%BE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/?fbclid=IwAR3ZP-IP\\_YZCALOJoqyOMpbgnB-kyVLr0fkWQHH2LthTWzKVYoyucnNfmag](#)

Հաշվի առնելով թեկնածուների անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը՝ մրցույթի ընթացքում հասանելի դարձած տվյալներին կամփոփվեն ընդհանրական եզրահանգումներով:

## Հարցազրույցների անցկացում

Հարցազրույցի յուրաքանչյուր օրվա համար նախապես հրավիրված են եղել այդ օրվա մասնակիցները, որոնց թիվը, ինչպես արդեն ներկայացվեց, եղել է 8 կամ 9:

Թեկնածուները սպասել են հարցազրույցների համար նախատեսված դահլիճին կից միջանցքում, որտեղ վերջիններիս համար նախատեսված է եղել նաև նստելու հնարավորություն:

Նախապես կազմված ցուցակի հերթականության հիման վրա յուրաքանչյուր թեկնածու հրավիրվել է հարցազրույցի դահլիճ:

Դահլիճում Հանձնաժողովի անդամներից և Կազմակերպության ներկայացուցչից բացի ներկա են գտնվել նաև հանձնաժողովի քարտուղարը և համապատասխան աշխատակից, ով ըստ ցուցակի թեկնածուներին հրավիրել է դահլիճ:

Դահլիճ հրավիրվելուց հետո հանձնաժողովի նախագահը թեկնածուին ներկայացրել է որակավորման քննության կարգը, առ այն, որ թեկնածուն նախ պետք է ներկայանա, ինչից հետո հանձնաժողովի անդամները կարող են ոչ մասնագիտական հարցեր տալ, կատարել լրացուցիչ պարզաբանումներ և ճշգրտումներ բարեվարքության թերթիկի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության եզրակացության վերաբերյալ, ինչից անմիջապես հետո սկսվում է մասնագիտական ստուգումը, որի ընթացքում հանձնաժողովը տալիս է առնվազն 6 հարց՝ նախապես կայքում հրապարակված հարցաշարից: Մինչ մասնագիտական հարցերին անդրադառնալը, այս փուլում մի շարք թեկնածուների հարց է տրվել դատախազ դառնալու ցանկության եւ մոտիվացիայի մասին, ինչի առնչությամբ տրվել են տարբեր պատասխաններ՝

- Միշտ ցանկացել եմ դատախազ դառնալ;

- Դատախազի աշխատանքը ավելի գրավիչ է;

- Դատախազությունը լավ իրավաբան դառնալու դարբնոց է եւ այլն:

Սակայն համոզիչ եւ հիմնավոր մոտիվացիոն պատասխաններ այս հարցի առնչությամբ չի արձանագրվել, ինչը նշվել է նաեւ Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովի բոլոր անդամները հիմնականում հանդես են եկել հարցերով, սակայն նկատվել է, որ բոլոր թեկնածուների պարագայում պարտադիր հարց տվել են հանձնաժողովի նախագահը և Արդարադատության ակադեմիայի ռեկտորը՝ որպես իրավաբան գիտնական անդամ:

Հատկանշական է, որ մրցույթի հարցաշարը պարունակում է հարցերի բավականին լայն շրջանակ՝ վերաբերելի ինչպես ՀՀ Սահմանադրությանը, Եվրոպական Կոնվենցիային և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքին, վարչական և վարչական դատավարության օրենսգրքին, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքին, Քրեակատարողական օրենսգրքին, ինչպես նաև քրեական և քրեական դատավարության օրենսգրքերին: Հարցերը, սակայն, հիմնականում տրվել են քրեական և քրեական դատավարության օրենսգրքերից, հանձնաժողովի նախագահի կողմից երբեմն հարցեր տրվել են նաև Եվրոպական Կոնվենցիայից եւ դատարանի նախադեպերից:

Պետք է միևնույն ժամանակ նշել, որ քրեական և քրեական դատավարության օրենսգրքից բխող հարցերը եղել են կրկնվող, ինչպիսիք են, օրինակ՝

- Քրեական հետապնդում հարուցելը
- Արարքը մի խումբ անձանց կողմից կատարելը
- Հափշտակություն և շորթում
- Անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության տարբերությունները
- Հանցակիցների պատասխանատվությունը չավարտված հանցագործության համար
- Ձերբակալության հասկացությունը
- Փորձաքննության տեսակները



- Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործության քրեաիրավական բնութագիրը:
- Ինքնիրավչությունը
- Առևանգման հասկացությունը
- և այլն

Հարցեր ընդհանրապես չեն տրվել վարչական իրավունքի և դատավարության ոլորտից, ՀՀ Սահմանադրությունից, քաղաքացիական դատավարությունից:

Չնայած կրկնվող հարցերին, թեկնածուների մոտ հնչեցված հարցերին լիարժեք պատասխան և պատրաստվածություն չի նկատվել:

Հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի տվել է 6 հարց, ինչը մեր գնահատմամբ նույնպես լիովին բավարար է եղել եզրակացություն կազմելու համար: Ըստ անհրաժեշտության անդամները տվել են լրացուցիչ հարցեր եւս, սակայն նման դեպքեր հաճախ չեն արձանագրվել:

Պետք է դրական արձանագրել այն հանգամանքը, որ թեկնածուի կողմից հարցերին պատասխան չհնչեցնելու կամ սխալ հնչեցնելու պարագայում հանձնաժողովի հարց տվող անդամը պարտադիր հնչեցրել է նաև ճիշտ պատասխանը, այդպիսով թեկնածուին ներկայացնելով նաև իր պատասխանի բացերը և տալով հիմնավորում, թե ինչումն է եղել սխալ պատասխանը:

Յուրաքանչյուր թեկնածուի հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի քարտուղարը արձանագրում է ինչպես հնչեցվող հարցը, համարը, այնպես էլ դրա ճիշտ կամ սխալ լինելու պատասխանը: Վերջինս նշվում է հարց տվող անդամի կողմից՝ յուրաքանչյուրից հարցից հետո:

Առանձնակի պետք է շեշտադրել հանձնաժողովի անդամների հարցազրույցի վարման և հարցեր տալու մանկավարժական հմտությունները: Բոլոր անդամները թեկնածուների նկատմամբ դրսևորել են համբերատար և օժանդակող մոտեցում:

Բոլոր այն դեպքերում, երբ թեկնածուի մոտ նկատվել է լարվածություն, հանձնաժողովը փորձել է ոչ մասնագիտական հարցերով նախ լարվածությունը ցրել, հետո անցնել բուն բովանդակային հարցերին:

Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ թեկնածուն ակնհայտ պատրաստված չի եղել և հարցերին պատասխաններ չեն տրվել, սակայն հանձնաժողովի կողմից ոչ թե միանգամից արձանագրվել է սխալ պատասխանի հանգամանքը, այլ հարցերով, հուշումներով փորձ է արվել օգնել թեկնածուներին:

Սա ինչ խոսք դրական է գնահատվում, միննույն ժամանակ սակայն խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ թեկնածուների ընդհանուր պատրաստվածության և մասնավորապես հարցաշարի հարցերին տիրապետելու մակարդակը բավականին ցածր է եղել: Մի շարք թեկնածուների պատասխաններից եւ ընդհանուր վարքագծից կարելի է եզրահանգել, որ բավարար ընկալում չի եղել, թե ինչ պաշտոնի համար է քննությունը և ինչ կարողություններ է պահանջվում, ինչպիսի լրջություն է իրենում պարունակում դատախազության ինստիտուտն ու դատախազի աշխատանքը:

Թեկնածուների ընդհանուր ցածր պատրաստվածությունը ըստ այդմ ազդել է նաեւ հանձնաժողովի վրա՝ ստիպելով ավելի մեղմ և երբեմն նույնիսկ ակադեմիական քննության նմանվող մոտեցում ցուցաբերել որակավորման քննության նկատմամբ:

Խոսելով քննության ընթացքի մասին, դիտարկված 50 հարցազրույցները թույլ են տալիս արձանագրել նաեւ, որ թեկնածուների զգալի մեծամասնությունը ոչ միայն բուն քննական գործընթացին և հարցաշարով նախատեսված հարցերին պատրաստված չի եղել, այլև նկատվել է ընդհանուր իրավաբանական կրթության ոչ լիարժեքություն, մտածողության եւ վերլուծական հմտությունների բացակայություն, որը անկախ կոնկրետ քննությունից, լուրջ մարտահրավեր է և ՀՀ ակադեմիական կրթության, և ըստ այդմ նաեւ հետագա մասնագիտական գործունեության համար:

Այս տրամաբանության մեջ մեկ այլ խնդիր կապված է թեկնածուների մասնագիտական փորձառության բացակայության հետ, ինչը իհարկե բացատրվում է նրանով, որ օրենքը նման պահանջ չի դնում: Սակայն քննության ընթացքը ցույց է տվել, որ 22, 23 եւ նույնիսկ 24 տարեկան երիտասարդները դեռեւս պատրաստ չեն նման լուրջ աշխատանքի, քանի որ մեծ թվով թեկնածուներ ընդհանրապես չեն ունեցել մասնագիտական փորձառություն, աշխատելու, պրակտիկայում իրական խնդիրներին դիմակայելու, կողմնորոշվելու փորձ, ինչի բացակայությամբ

միանգամից դատախազի լուրջ պաշտոնի ստանձնումը կարող է հղի լինել լուրջ խնդիրներով:

Ավելին, զգալի թվով թեկնածուներ հանդիսացել են բուհի մագիստրոսական ծրագրի ուսանողներ՝ հեռակա ուսուցման եղանակով:

Հանձնաժողովի անդամները իրավացիորեն բարձրացրել են այս հարցը, թեկնածուից ճշտելով, թե հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում ինչպես է պատկերացնում հետագա կրթությունը՝ Արդարադատության ակադեմիան կրնտրի, թե մագիստրոսական կրթությունը: Այս խումբ թեկնածուները նշել են, որ կրնտրեն կրթությունը Արդարադատության Ակադեմիայում:

Կարծում ենք, որ նման պրակտիկան խնդրահարույց է, ինչը իհարկե կրկին կապված է օրենսդրական կարգավորումների հետ, քանի որ բավականին վաղ տարիքից (22 տարեկան) է թույլարտվում դիմել դատախազ դառնալու համար, եւ թեկնածուներին ներկայացվող պահանջները բավարար չեն դատախազի պաշտոնի համար: Այնուհանդերձ, նման կարգավորումներով և ձևավորված պրակտիկայով երկրորդական պլան է մղվում ակադեմիական կրթությունը և մասնավորապես մագիստրոսական կրթությունը, ինչը էական բազա պետք է լինի մասնագետ կառուցելու գործում: Ամբողջ բեռը նման պայմաններում դրվում է Արդարադատության ակադեմիայի վրա, որտեղ կրթությունը բնականաբար չի թերագնահատվում, սակայն չի կարող լրացնել մասնագիտական պատրաստվածության բոլոր բացերն ու պահանջները և թերի ակադեմիական կրթությունը:

Այս առնչությամբ, նկատվում է անհրաժեշտություն վերանայել ոչ միայն դատախազներին ներկայացվող պահանջները՝ տարիք, աշխատանքային փորձ, այլ նաև բուհական կրթությունն ու դրա շրջանակներում ուսուցանողների մտածողության, վերլուծական կարողությունների ձևավորմանն ուղղված մոտեցումները:

## Հանձնաժողովի կողմից որոշման կայացում

Ինչպես արդեն ներկայացվել է, Հանձնաժողովը որոշումները կայացնում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է ընդունված: Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Ինչպես պարզ դարձավ դիտարկումից, հանձնաժողովի անդամների կողմից տրվող հարցերից անմիջապես հետո հանձնաժողովը անցնում է որոշման կայացման: Այդ ընթացքում թեկնածուն դուրս է հրավիրվում դահլիճից: Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովին հարցնում է, թե ով է կողմ թեկնածուին դատախազների թեկնածությունների ցուցակում ներառելու վերաբերյալ դրական եզրակացություն տալուն, ինչից հետո անդամները քվեարկում են՝ կողմ լինելու դեպքում ձեռք բարձրացնելու եղանակով: 3 կամ ավելի կողմ ձայների դեպքում թեկնածուն համարվում է դրական եզրակացություն ստացած և ընդգրկվում է գլխավոր դատախազին ներկայացվող թեկնածությունների ցուցակում՝ ՀՀ Արդարադատության ակադեմիայում հետագա ուսուցման համար:

Դիտարկված դեպքերից մեծ մասի պարագայում կողմ կամ դեմ քվեարկության հիմնավորում կամ քննարկում, առանձին անդամների կարծիքների ներկայացում տեղի չի ունեցել: Քվեարկության նման եղանակը խնդրահարույց է՝ պատճառաբանված որոշում կայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Մյուս կողմից, սակայն, հարցազրույցի ընթացքը ցույց է տվել, որ հարցերի եւ պատասխանների ընթացքն ու հանձնաժողովի անդամների կողմից հարցի պատասխանի սխալ կամ ճիշտ լինելու արձանագրումը արդեն իսկ վերջնական եզրահանգման բավարար հիմքեր է ձևավորում: Քանի որ ինչպես արդեն ներկայացվեց վերելում, յուրաքանչյուր հարցից հետո հարց հնչեցնող անդամը նշում է՝ արդյոք այն ճիշտ է կամ սխալ, տալիս լրացուցիչ պարզաբանումներ: Այնուհանդերձ, կարևորելով պատճառաբանված որոշման դերը, ինչը կարևոր է նաև

հնարավոր բողոքարկումների համար, անհրաժեշտ է որոշման կայացման նման ընթացակարգը լրացնել՝ ապահովելով պատճառաբանվածությունն ու հիմնավորվածությունը:

## **Թեկնածուների բարեվարքության ստուգման եւ ԿԿՀ եզրակացությունների դերը**

Ներպետական օրենսդրությամբ Որակավորման հանձնաժողովի կողմից թեկնածուների ընտրության ժամանակ հանձնաժողովի անդամները հաշվի են առնում նաև հայտատուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի /այսուհետ՝ ԿԿՀ/ տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը:

Պետք է նախ արձանագրել, որ դիտարկումը ցույց է տվել մրցույթի ընթացքում բարեվարքության խորհրդատվական եզրակացությունների էական դերակատարումը որոշումների ելքի վրա:

Ի սկզբանե, մինչ մասնագիտական հարցերի փուլը, հանձնաժողովը յուրաքանչյուր թեկնածուի հետ ծանոթանալուց հետո, հարցադրումներ է կատարել լրացրած բարեվարքության թերթիկից եւ ԿԿՀ կողմից արձանագրված հանգամանքների վերաբերյալ: Դիտարկման ընթացքը ցույց է տվել, որ Հանձնաժողովը բոլոր դեպքերում եզրակացության հիմքում դրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերհանումները, ինչը դրական է գնահատվում բարեվարքության ստուգման համակարգի զարգացման համատեքստում:

Մասնավորապես, ճշգրտումները և հարցադրումները եղել են հետևյալ բնույթի՝

- կապը քրեական ենթամշակույթի հետ, ինչ է թեկնածուն դրա տակ հասկանում, ճանաչում է նման անձանց, թե ոչ: Բոլոր այն թեկնածուները, ում տրվել է նման հարցադրում, նշել են քրեական ենթամշակույթի հետ կապի բացակայության

- մասին: Առանձին մեկ երկու դեպքերում ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչների կողմից տրվել է երեւոյթի բացատրությունը;
- սոցիալական ցանցերում գրանցված լինելու հանգամանքը, ինչ նպատակով են այն օգտագործում, ինչքան հաճախականությամբ են օգտվում եւ այլն: Հիմնական սոցիալական ցանցերը, որոնցում թեկնածուները գրանցված են եղել, Facebook եւ Instagram էջերն են եղել: Թեկնածուները հիմնականում նշել են, որ օգտվում են շփումների համար, տեղեկատվություն ստանալու, տարբեր էջերի հասանելիություն ունենալու համար;
  - արդյոք թեկնածուն մեքենա վարում է, թե ոչ: Ըստ այդմ ճանապարհատրանսպորտային կանոնների խախտումներ ունի, թե ոչ, ինչպիսի խախտումների մասին է խոսքը: Նշենք, որ խախտումների հանգամանքը արտացոլված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված եզրակացության մեջ, եւ պատահել են դեպքեր, երբ թեկնածուի կողմից և ԿԿՀ նշված թվերը տարբեր են եղել: Թեկնածուները ավելի քիչ խախտումների թիվ ներկայացնելը բացատրել են, օրինակ, այլ հասցեում գրանցված լինելու հանգամանքով, ինչով պայմանավորված ծանուցումները չեն ստացել;
  - նախկինում մասնակցել է հանրային ծառայության քննության, թե ոչ: Հատկանշական է, որ որոշ թեկնածուներ, ովքեր նախկինում ունեցել են նման փորձ, չեն նշել, սակայն տեղեկությունը պարզ է դարձել ԿԿՀ եզրակացությունից: Թեկնածուները նման բացը բացատրել են նրանով, որ, օրինակ վրիպակ է եղել, կամ չեն իմացել, որ պետք է պարտադիր լրացնել, ինչը արձանագրվել է Հանձնաժողովի կողմից;
  - տեղեկություն իր և համատեղ բնակվող ընտանիքի անդամների եկամուտների, գույքի և ունեցվածքի մասին: Այս հարցի առնչությամբ նկատվել են մի շարք խնդիրներ, որոնք պատշաճ արձագանք են ստացել Հանձնաժողովի կողմից:
  - Առանձին դեպքերում, թեկնածուները չեն հայտարարագրել իրենց աշխատավարձը, նշելով, որ չափը հստակ չեն իմացել, ինչը Հանձնաժողովի կողմից լրացուցիչ հարցադրումների տեղիք է տվել: Ավելին, եղել են ծնողների եկամուտը կամ եկամտի աղբյուրները չհայտարարագրելու եւ/կամ հարկային

պարտավորությունների չկատարման վերաբերյալ տեղեկություններ, ինչը ի նկատի է ունեցվել Հանձնաժողովի կողմից;

- Նմանապես, արձանագրվել են դեպքեր, երբ թեկնածուները չեն հայտարարագրել իրենց կամ ծնողների անունով գրանցված սեփականությունները՝ բնակարան, հողակտոր, մեքենա, ինչպես նաև բաժնեմասերը: Պարզաբանելով նման բացթողումը տարբեր պատճառներով՝ օրինակ՝ «վրիպակ է եղել» կամ «չեն իմացել, որ հողակտորը իրենցն է», «համապատասխան սեփականության վկայական չի եղել, այդ պատճառով գույքի մասին չի նշվել», «մոռացել է նշել» եւ այլն;
- Խնդրահարույց հանգամանք է դիտարկվել նաև, որոշ թեկնածուների կողմից կանխիկ մեծ գումարի հայտարարագրման հանգամանքը, ինչի առնչությամբ Հանձնաժողովը փորձել է պարզել, թե ինչու այդ գումարը բանկում չի պահվում օրինակ: Չնայած նման դեպքերը քիչ են եղել /2-3 դեպք/, այնուհանդերձ, հիմնավորումները համոզիչ չեն եղել: Օրինակ նշվել է, որ գումարը պահվում է բնակարան գնելու նպատակով, ինչը լրացուցիչ հարցի տեղիք է տվել, առ այն, որ օրինակ բանկում ավանդի տեսքով պահվելու դեպքում հնարավոր էր այն ավելացնել:
- Եղել են թեկնածուներ, որ նշել են հարցաթերթիկը ծնողի կողմից լրացնելու հանգամանքի մասին:

Հանձնաժողովը ուշադրություն է դարձրել նաև թեկնածուի ընտանեկան կապերին, ծնողների աշխատանքին եւ պաշտոններ զբաղեցնելու հանգամանքին:

Պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ հարցադրումները վերաբերել են խնդրահարույց տվյալների կամ դրանց բացակայության, եւ պարզ է դարձել, որ ԿԿՀ եզրակացությունը ինքնին հիմնված է նմանատիպ խնդրահարույց բացահայտումների վրա, Հանձնաժողովը որոշում կայացնելիս շեշտել է այդ հանգամանքը եւս եւ դա էական դերակատարում է ունեցել վերջնական որոշման վրա:

Կարելի է արձանագրել, որ Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելիս ԿԿՀ եզրակացություններն ու բարձրացված հարցերը էական դերակատարում են ունեցել եւ ընդունվել ի գիտություն՝ որպես թեկնածուի գնահատման եւ օրենքով պահանջված բարեվարքության ստուգման հիմնական մեխանիզմ:

## ԿԿՀ կողմից բարեվարքության գնահատումը

Մույն զեկույցի պատրաստման ընթացքում բարեվարքության ստուգման վերաբերյալ առավել համապարփակ տվյալներ ստանալու նպատակով հանդիպում քննարկում է տեղի ունեցել նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացուցիչների հետ:

Օրենքով սահմանված կարգով բարեվարքության ստուգման համար հանձնաժողովը նախ իրականացնում է համապատասխան ուսումնասիրություններ թեկնածուների վերաբերյալ: Ուսումնասիրությունը ենթադրում է տեղեկության հավաքման համալիր գործընթաց: Նախ թեկնածուն լրացնում է բարեվարքության հարցաթերթիկը և այն ներկայացնում ԿԿՀ-ին<sup>41</sup>: Ինչի հիման վրա հանձնաժողովը իրականացնում է լրացուցիչ ուսումնասիրություններ: Մասնավորապես, հարցումներ են ուղարկվում պետական տարբեր շահագրգիռ մարմինների՝ օրինակ Ազգային անվտանգության ծառայություն, Դատական դեպարտամենտ, Ոստիկանություն, Կադաստրի կոմիտե եւ այլն: Հարցաթերթիկում լրացված տվյալների հիման վրա տեղեկությունները ճշտվում են նաև թեկնածուի հետ՝ բանավոր հեռախոսազանգի միջոցով: Խոսակցությունը ձայնագրվում է, ինչի մասին թեկնածուն տեղեկացվում է: Այդ ընթացքում ստացված լրացուցիչ տվյալներն ու բացատրությունները ներառվում են բարեվարքության ստուգման մեջ: Հնարավոր են իրավիճակներ, երբ ի հայտ եկած հարցերը չեն ապացուցվում եւ առաջանում է արժանահավատության հարց: Նման դեպքերում ԿԿՀ եզրակացությունը տրվում է որոշակի վերապահումներով:

Այն տեղեկատվությունը, որի վերաբերյալ կասկածները ամբողջովին չեն փարատվում եզրակացության մեջ նշվում է, որ անհրաժեշտ է հավակնորդին ուղղել լրացուցիչ հարցեր, ստանալ պարզաբանումներ և գնահատել դրանց արժանահավատությունը:

---

<sup>41</sup> <http://cpcarmenia.am/hy/news/item/2020/05/26/154789/>



Ուսումնասիրության ընթացքում հանձնաժողովը կարող է կապ հաստատել մասնավոր մարմինների հետ նույնպես՝ կապված աշխատանքի եւ այլ գործունեության հետ: Թեկնածուն բարեվարքության հարցաթերթիկը լրացնելիս, նշում է այն անձանց, ումից հանձնաժողովը կարող է տվյալներ և կարծիք ստանալ: Մակայն վերջիններս կաշկանդված չեն միայն նշված անձանցով, այլ իրենց նախաձեռնությամբ նույնպես այլ վերաբերելի անձանցից ստանում են տվյալներ:

Ինչպես դատախազների թեկնածուների քննության մշտադիտարկումը, այնպես էլ բարեվարքության ստուգման ուսումնասիրությունը ցույց են տվել խնդիրներ Ազգային անվտանգության ծառայությունից ստացվող տվյալների առնչությամբ: Մասնավորապես, մի կողմից ստացվող տվյալները կարող են լինել ոչ օբյեկտիվ, մյուս կողմից ոչ ամբողջական, ինչը լրացուցիչ ուսումնասիրությունների տեղիք է տալիս:

Շատ հաճախ թեկնածուները հարցաթերթիկը լրացնում են ոչ ամբողջական կամ թույլ են տալիս բացթողումներ: Հիմնական բացատրություն պարզաբանումը թեկնածուի կողմից նման իրավիճակների առնչությամբ այն է, որ կամ վրիպակ է եղել կամ չեն հասկացել հարցն ու լրացման ձևաչափը: Թեկնածուները նման դեպքերում զանգահարում են դատախազության կողմից տրամադրած հեռախոսահամարով, որով սակայն չեն կարողանում ճիշտ պատասխանել հարցերին, հետևաբար ավելի ճիշտ է հարցաթերթիկի լրացման առնչությամբ կապ հաստատել Հանձնաժողովի հետ:

Քննարկումից պարզ դարձավ, որ Հանձնաժողովը արձանագրել է դեպքեր, երբ այլ անձինք են թեկնածուների փոխարեն լրացրել հարցաթերթիկները, օրինակ ընտանիքի ավագ անդամները:

Հաշվի առնելով մրցույթի եւ հավակնող պաշտոնի լրջությունը և կարևորությունը, վրիպակների ու բացթողումների ծավալները մտահոգության տեղիք են տալիս այն մասով, որ դատախազի թեկնածուները բավարար ուշադրություն եւ հետևողականություն հարցաթերթիկների լրացմանը փաստորեն չեն ցուցաբերում և/կամ բավարար խորությամբ չեն ընկալում դրա կարևորությունը:

Հավակնորդների կրթության ստուգման առնչությամբ Հանձնաժողովը նշել է լրացուցիչ գործիքների և աշխատանքի անհրաժեշտություն: Քանի որ ներկայումս

ԿԿՀ-ն հիմք ընդունում է հավակնորդի կողմից տրված տեղեկատվությունը, լրացուցիչ տվյալներ և ստացված կրթության մեջ հավաստիանալու համար Հանձնաժողովը պետք է հարցումներ և լրացուցիչ ուսումնասիրություն իրականացնի նաև կրթական հաստատությունների հետ:

Ինչ վերաբերում է թեկնածուների վարքագծի ստուգմանը, ապա այստեղ կա խնդիր, քանի որ Հանձնաժողովը դեռևս չունի հաստատված վարքագծի կանոններ, ինչի պայմաններում անհնար է առանց վերաբերելի հիմքերի գնահատել թեկնածուի վարքագիծը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քննարկել ՀՀ-ում դատախազական խորհուրդ ձևավորելու հարցը, վերջինիս մոդելն ու կազմակերպման ընթացակարգերը, կազմում նախատեսելով ինչպես դատախազներ, այնպես էլ անկախ իրավաբան-փորձագետներ:
- Վերանայել որակավորման հանձնաժողովի կարգավիճակը, վերջինիս ձևավորմանն ու անդամներին ներկայացվող պահանջները:
- Գլխավոր դատախազի ընտրության եւ նշանակման գործում ապահովել դատախազական խորհրդի մասնակցությունը:
- Վերանայել ներպետական օրենսդրությամբ նախատեսված բաց եւ փակ մրցույթների անցկացման ընթացակարգերը՝ պարտադիր նախատեսելով դատախազական խորհրդի եւ ըստ այդմ նաեւ արտաքին փորձագիտական մասնակցություն մրցույթին:
- Դատախազության մասին ՀՀ օրենքով նախատեսել կարգավորում այն մասին, որ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթին մշտադիտարկման նպատակով կարող են մասնակցել ոլորտային հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ՝ նախատեսելով վերջիններիս համար հստակ պահանջներ ու ընթացակարգ:
- Վերանայել բաց մրցույթի անցկացման ընթացակարգը՝ այն դարձնելով երկփուլ՝ գրավոր և բանավոր հարցազրույցի անցկացում: Գրավոր փուլի նպատակ պետք է լինի վերաբերելի իրավական խնդրի լուծումն ու վերլուծության տրամադրումը թեկնածուի կողմից, որով կստուգի վերջինիս մասնագիտական պատրաստվածությունը, օրենսդրական կարգավորումներին տիրապետելը, վերլուծելու եւ մտածելու կարողությունները: Բանավոր հարցազրույցի փուլին կկարողանան մասնակցել այն թեկնածուները, ովքեր հաղթահարել են գրավոր փուլը: Բանավոր փուլի նպատակը թեկնածուի հաղորդակցման, բանավոր խոսքի կարողությունների, էթիկայի, դատախազի վարքագծի կանոնները տիրապետելու ու մտածելակերպի ստուգումը պետք է լինի: Այն կներառի հարցեր

- բարեվարքության ստուգման արդյունքներից ու Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ տրված եզրակացությունից
- ԿԿՀ ստուգման արդյունքները օրենքով դարձնել պարտադիր վերջնական որոշում կայացնելիս:
  - Վերջնական որոշման համար օրենքով սահմանել պատճառաբանման ու հիմնավորման պարտադիր պահանջներ
  - Վերանայել դատախազների թեկնածուների համար օրենքով սահմանված չափանիշներն ու պահանջները: Մասնավորապես, վերանայման է ենթակա թեկնածուների տարիքը՝ 22 տարեկանից դարձնելով առնվազն 25 տարեկան, ինչը միայն կարող է բավարար լինել դատախազի պաշտոնը ստանձնելու համար:
  - Վերանայել թեկնածուներին առաջադրվող պահանջները մասնագիտական փորձի վերաբերյալ՝ սահմանելով առնվազն 2 տարվա մասնագիտական վերաբերելի փորձի առկայություն:
  - Վերանայել օրենքով նախատեսված փակ մրցույթի անցկացման ընթացակարգը՝ կամ այն ներառելով բաց մրցույթի մեջ որպես առանձին ներքին մրցույթ, կամ ամբողջությամբ վերանայել դրա գոյությունը: Յուրաքանչյուր պարագայում ապահովել մրցույթի հրապարակայնության ու թափանցիկության սկզբունքները:
  - Օրենքով սահմանել որակավորման հանձնաժողովի կազմում իրավաբան գիտնական անդամների ներգրավվման հստակ չափանիշներ ու պահանջներ:

### **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերաբերյալ**

- Կոռուպցիայի կանխարգելիչ հանձնաժողովի կողմից տրվող բարեվարքության եզրակացությունները դարձնել հրապարակային, այնքանով, որքանով չի խախտվի թեկնածուների անձնական և ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունքը,
- Օրենսդրական հիմքեր ստեղծել թեկնածուների մերձավոր ազգականների ստուգման համար, ովքեր համատեղ բնակվող չեն հանդիսանում, սակայն կարևոր դերակատարում ունեն թեկնածուի ընդհանուր բարեվարքության եւ ընտանեկան կապերի ստուգման տեսանկյունից,

- Հաստատել հանրային ծառայողների եւ թեկնածուների վարքագծի կանոնները՝ ապահովելու դրանց պրակտիկ կիրառելիությունը
- Ընդլայնել համագործակցությունն ու ուսումնասիրությունները պետական եւ ոչ պետական մարմինների, կրթական հաստատությունների հետ
- Բարձրացնել Հանձնաժողովի աշխատանքի եւ բարեվարքության ստուգման վերաբերյալ հանրային իրազեկվածությունը